2026, ԱՊՐԻԼ Ա, ԹԻՎ 7 (699)

Տիրոջդ հայտնի է

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի պատգամը
Տեր և Փրկիչ Հիսուս Քրիստոսի Սուրբ Հարության տոնի առիթով



Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

«Ինչպես որ Քրիստոս մեռելներից հարություն առավ Հոր փառքով, նույնպես և մենք քայլենք նոր կյանքով»
(Հռոմ 6.4):

Սիրելի՛ հավատավոր ժողովուրդ,

Այսօր, համախմբված եկեղեցիներում, տոնում ենք մեր Տեր Հիսուս Քրիստոսի Սուրբ և հրաշափառ Հարությունը: Փառաբանում ենք Աստվածորդուն, որ մեր փրկության համար հանձն առավ ամեն զոհողություն, չարչարանքներ կրեց, խաչվեց, թաղվեց և հարություն առավ: Փրկչի Հարությամբ լուսավորվեց նոր կյանքի ճանապարհը: Աղամական մեղքով Աստծուց հեռացած և մահվան իշխանությանը ենթակա մարդկությանը Փրկիչ մեր Տերը՝ Հիսուս, կոչեց հարություն կյանքի, որպեսզի, ազատվելով չարի ու մահվան կապանքներից, արժանի լինի տերունական փրկարար շնորհներին և ժառանգի երկնքի արքայությունը: «Ինչպես որ Քրիստոս մեռելներից հարություն առավ Հոր փառքով, նույնպես և մենք քայլենք նոր կյանքով»,– պատգամում է առաքյալը:

Տիրոջ փրկագործությամբ մարդուն տրվեց աստվածային օրհնությունը՝ զորությամբ վերադառնալու առ Երկնավոր Հայրը և տառապանքների խավարից գտնելու վերհառնումի լուսավոր ուղին: Քրիստոսապարգև հարություն կյանքը սկսվում է, սիրելինե՛ր, սրտի և հոգու նորոգությամբ, երբ անհատը զորանում է հավատով, ապրում Աստծո ներկայությամբ, դառնում նոր արարած, արարում բարին ու գովելին: Քրիստոսի Հարության հավատով և տերունավանդ պատվիրանների իրագործմամբ է հնարավոր հրաժարվել խոտոր ընթացքներից, հաղթահարել ժամանակի դժվարությունները և քայլել սիրո, ճշմարտության ու արդարության շավիղներով, ինչպես հորդորում է առաքյալը. «Ընթացե՛ք ինչպես լուսո որդիներ. քանզի լուսո պտուղներն են բարություն, արդարություն և ճշմարտություն» (Եփես. 5.8–9):

Հիրավի, Հարության հավատով է բացվելու մարդկության պատմության նոր այգաբացը, բարեփոխվելու՝ աշխարհը, և իրականացվելու՝ համընդհանուր խաղաղության ու անվտանգության արդար հույսերը: Աշխարհի խառնաշփոթում, սակայն, թվում է, թե խլացել են առաքյալի հորդորն ու ավետարանական պատգամները, և Աստծո արարչագործությունը անարգվում ու վտանգվում է չարագործություններով ու անօրինություններով, մարդկության կյանքն ալեկոծվում ու խորտակվում է հակամարտություններով, թշնամանքով ու պատերազմներով: Բարօր ու արդար աշխարհ հաստատելու համար ներկա բազմաթիվ սպառնալիքների պայմաններում ազգերն ու պետությունները առավել նախանձախնդրությամբ պիտի հետամուտ լինեն Բարձրյալ Աստծո կամքին՝ հաղթահարելու համար առկա ծանր փորձություններ, ամրապնդելու հիմքերը համամարդկային համերաշխության, խաղաղ համակեցության և արդյունավոր գործակցության: Համընդհանուր այսպիսի ջանքերով է, որ ժողովուրդներն «իրենց սուսերներից խոփեր պիտի ձուլեն և իրենց սվիններից՝ մանգաղներ. ազգ ազգի վրա սուր չպիտի բարձրացնի, և նրանք այլևս չեն սովորելու պատերազմել»,– ինչպես ագդարարում է մարգարեն (Եսայի 2.4):

Սիրելինե՛ր, արցախյան ողբերգական պատերազմից տարիներ անց տակավին տագնապներն ու մտահոգությունները չեն լքում մեր սրտերը, որ տենչում են խաղաղություն ու անվտանգություն: Մեր ժողովուրդը լավագույնս գիտի արժեքը խաղաղության ու անվտանգության, որի համար ազգիս զավակները վճարել են իրենց կյանքով: Դեռ թարմ են մեր կրած վշտերն ու վերքերը, որոնց ցավն այսօր ավելի է խորանում արցախահայության իրավունքների ոտնահարումով, պատանդառված մեր հայրենակիցների ապօրինի ազատազրկմամբ: Ցավը խորանում է, երբ շարունակվում է սերմանվել պառակտումի որոմը, երբ անտեսվում ու խեղաթյուրվում են նվիրական արժեքներ, երբ գործադրվում է կամայական ու ընտրովի արդարադատություն, և կեղծ ու շինծու մեղադրանքներով իշխանությունների կողմից բռնաճնշումներ են իրականացվում Եկեղեցու նկատմամբ: Եկեղեցին Քրիստոսով անասյան է, հզոր և աներեր: Եկեղեցին Աստծո տունն է, հավատացյալների հավաքականությունը, իր փրկարար առաքելությամբ խաղաղության, եղբայրսիրության ջատագովն ու ավետարանողը, Քրիստոսի հրաշափառ Հարության անլռելի քարոզիչը: Եկեղեցին հարուցյալ կյանքի հրավերն է մշտապես բարձրաձայնում՝ իր զավակներին զերծ պահելու համար հուսահատությունից, անիրավություններից ու անկումներից, զերծ պահելու հայրենական և ազգային անդաստանը կորստաբեր ճանապարհներից: Հարուցյալ կյանքը երբեք չի կարող լինել միմյանցից օտարացմամբ ու բաժանումներով, քրիստոնեական արժեքների խեղմամբ, Եկեղեցու առաքելության նսեմացմամբ ու սահմանափակմամբ, ազգային շահերը խեղաթյուրելով, արդարությունն ու ճշմարտությունը աղճատելով: Մինչև չմերժենք չար գործերն ու կորստաբեր քայլերը, չենք կարող հաստատել զարթոնք ու ծաղկում, առաջադիմություն ու բարօրություն անձնական ու հասարակական կյանքում և կերտել մեր ժողովրդի հարատևության անխորտակելի հեռանկարները:

Արդ, սիրելինե՛ր, Հայրապետական Մեր պատգամն է՝ նախընտրենք բարին ընդդեմ չարիքի, հաշտությունն ընդդեմ խառնակչության, ազնվությունն ու ուղղամտությունը՝ ընդդեմ կեղծիքների ու խարդավանքների, փոխադարձ հարգանքն ու զորակցությունը՝ ընդդեմ անպատվության ու նենգադավության: Առաջնորդվենք վնասակար ու կործանարար երևույթները բացառելու հանձնառությամբ, մեր պարտություններից ուղի կանգնելու հաստատակամությամբ և նախնյաց ժառանգությունը անաղարտ պահպանելու նախանձախնդրությամբ: Գերադասենք սերը, համերաշխությունը, միասնությունը, որպեսզի համատեղ ջանքերով կարող լինենք մեր հառնել մեզ պատուհասած նեղություններից ու դժվարություններից, ամրապնդել մեր պետականությունը և կերտել ազգի առաջընթացն ու բարգավաճումը: Միշտ հավատարիմ մնանք հարուցյալ մեր Տիրոջը, Որ «Իր անձը տվեց մեզ համար, որպեսզի մեզ փրկի ամեն անօրենությունից և մաքրի որպես Իրեն սեփական ժողովուրդ՝ նախանձախնդիր բարի գործերի» (Տիտ. 2.14):

Սուրբ Հարության ուրախալի ավետիսով Միածնաէջ Մայր Տաճարից եղբայրական Մեր ողջույններն ենք հղում Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու Նվիրապետական Աթոռների Գահակալներին՝ Ն. Ս. Օ. Տ. Տ. Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսին, Երուսաղեմի Հայ Պատրիարք Ամենապատիվ Տ. Նուրհան արքեպիսկոպոս Մանուկյանին, Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարք Ամենապատիվ Տ. Սահակ արքեպիսկոպոս Մաշալյանին, մեր Սուրբ Եկեղեցու ուխտապահ ողջ հոգևոր դասին: Մեր ողջույնն ենք հղում ի Քրիստոս Մեր հոգևոր եղբայրներին՝ քույր Եկեղեցիների Պետերին, և իրենց հավատավոր հոտին: Հայրապետական Մեր սերն ու օրհնությունը՝ ազգային ու հոգևոր արժեքներին նախանձախնդիր մեր ժողովրդին: Հայրական Մեր գնահատանքը ձեզ ամենքիդ, սիրելինե՛ր, առ հայրենին և մեր Սուրբ Եկեղեցին հանապազ դրսևորվող հավատարմության և ջերմ նվիրումի համար: Մենք ամեն օր զգացել և շարունակում ենք զգալ ձեր աղոթքի զորությունը: Ձեզնով է շեն ու անսասան մեր Սուրբ Եկեղեցին, որին դարեր փորձություններն անգամ չեն խորտակել: Ձեզնով է զորեղ, ամուր ու լուսափայլ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը: Շարունակեք ապրել աղոթքով, գործեք ու արարեք առ հայրենին ու Մայր Եկեղեցին սիրով՝ ի նպաստ մեր երկրի շինության ու լուսավոր գալիքի:

Հոգենորոգ այս օրը միասնաբար աղոթք բարձրացնենք առ հարուցյալ Աստվածորդին, որ Իր անբավ ողորմությամբ պարգևի խաղաղություն ու ապահովություն համայն աշխարհին և հայրենի մեր երկրին: Հայցենք, որ երկնային կենարար շնորհներով զորանա աշխարհասփյուռ մեր ժողովուրդը, ապրի հավատով ներշաղախ կյանքով, դժվարությունները հաղթահարելու խիզախ ու անկոտրում ոգով: Աղոթենք, որ համազգային մեր անդաստանում հաստատուն լինեն ճշմարտասիրությունը, արդարամտությունն ու միաբանությունը, որպեսզի բարի արգասիքներով, ազգաշահ ու հայրենօգուտ նորանոր ձեռքբերումներով կերտենք ապագայատեսիլ մեր ժողովրդի իղձերն ու ձգտումները՝ ի փառս Աստծո և ի հավետ պայծառության ազգի և Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու: Աղոթենք նաև պատերազմի արհավիրքներից տառապող մեր եղբայրների ու քույրերի, ապօրինաբար ազատազրկվածների, անհայտ կորածների ու նրանց ընտանիքների, այլև նեղությունների ու զրկանքների մեջ գտնվողների, ապաքինման կարոտ անձանց համար: Թող Աստծո ամենախնամ Աջը, սերը և օրհնությունները հովանի լինեն մեզ ամենքիս այսօր և միշտ և հավիտյանս. ամեն:

Քրիստոս յարեաւ ի մեռելոց,
Օրհնեալ է յարութիւնն Քրիստոսի:



Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում նշվեց Սուրբ Հարության տոնը

Ապրիլի 5-ին մեր Տեր և Փրկիչ Հիսուս Քրիստոսի Հրաշափառ Սուրբ Հարության տոնի առիթով համայն հայության հոգևոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Սուրբ և Անմահ Պատարագ մատուցեց Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

Մայր Տաճարի զանգերի ավետաբեր ղողանջների ներքո Հայրապետական խաչվառազարդ թափորը Ամենայն Հայոց Կաթողիկոսին Վեհարանից ամպհովանիով առաջնորդեց դեպի Մայր Տաճար: Հայրապետական ամպհովանին այս տարի կրում էին բ. գ. դ., պրոֆեսոր, «Իզմիրլյան» ԲԿ ուրոլոգիական բաժանմունքի վարիչ Արթուր Գրաբսկին, ի. գ. թ. Արա Զոհրաբյանը, իրավաբան, միջազգային փորձագետ Արա Ղազարյանը և փաստաբան Երեմ Սարգսյանը:

Վեհափառ Հայրապետին որպես առընթերականեր սպասավորում էին Գերաշնորհ Տ. Նաթան արքեպիսկոպոս Հովհաննիսյանը և Գերաշնորհ Տ. Հայկազուն արքեպիսկոպոս Նաջարյանը:

Սուրբ Պատարագին ներկա էին Գերագույն հոգևոր խորհրդի անդամներ, Մայր Աթոռի բարերարներ, քաղաքական-հասարակական գործիչներ և բազում ուխտավոր հայորդիներ:

Արարողության ընթացքում Ամենայն Հայոց Կաթողիկոսը համայն հայությանը հղեց Հայրապետական իր պատգամը՝ փոխանցելով «Քրիստոս յարեաւ ի մեռելոց» հրեշտակածայն ավետիսը:





Սուրբ Հարության Ճրագալույցի Պատարագը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում

Ապրիլի 4-ին՝ Ավագ շաբաթ օրը՝ երեկոյան, մեր Տեր և Փրկիչ Հիսուս Քրիստոսի Հրաշափառ Սուրբ Հարության տոնի առիթով, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ, Միածնաէջ Մայր Տաճարում մատուցվեց Սուրբ և Անմահ Պատարագ:

Պատարագիչն էր Մայր Աթոռի Արտաքին հարաբերությունների և արարողակարգի բաժնի տնօրեն Գերաշնորհ Տ. Նաթան արքեպիսկոպոս Հովհաննիսյանը: Մինչ Սուրբ Պատարագը կատարվեց Ճաշու երրորդ ժամերգությունը, ապա կարդացվեցին սուրբգրային ընթերցվածքներ, որից հետո Մայր Աթոռի չորս միաբան սարկավագներ ընթերցեցին Դանիել մարգարեի թուղթը:

Սրբազան արարողությանը ներկա էին Գերագույն հոգևոր խորհրդի անդամներ, Մայր Աթոռի բարերարներ, քաղաքական-հասարակական գործիչներ և բազում ուխտավոր հայորդիներ:

Նաթան արքեպիսկոպոսը, իր քարոզում անդրադառնալով Տիրոջ Հարության խորհրդին, ընդգծեց. «Հարությունը վկայեց, որ մահը վերջը չէ, այլապես ինչպե՞ս պիտի արժևորվեր կյանքը: Քրիստոնեությունը հաստատեց, որ մարդուն կյանքի տարիները տրվում են ոչ թե վատնելու, այլ որպեսզի մարդն իր հավիտենական կյանքի ճանապարհը կերտի: ....Աստված Իր Միածին Որդուն ուղարկեց աշխարհ ոչ թե դատելու, այլ փրկելու, ոչ թե պատժելու, այլ ճանապարհը ցույց տալու փրկության»:







Վերջում Պատարագիչ Սրբազանը, դիմելով ներկաներին, մաղթեց, որ Տիրոջ Հարության լույսը մշտապես հովանի լինի մեր ազգի աշխարհասփյուռ զավակներին և մեր հայրենիքին, որպեսզի Հարության շնչով ընթանանք հավիտենության ճանապարհով:

«Հիսուս Քրիստոսի Հարության ավետիսով մենք մեր աղոթքն ենք վերառաքում Հարուցյալ Փրկչին, որպեսզի մեզ բոլորիս տա հավատք և զորություն, և կարողանանք այս երկրի վրա կերտել այն դրախտը, որը կդառնա յուրաքանչյուրիս հավիտենական կյանքի ճանապարհը»,– նշեց Նաթան արքեպիսկոպոսը:

Սուրբ Պատարագի ավարտին Ամենայն Հայոց Կաթողիկոսը բարձրացավ Սուրբ Խորան և Սուրբ Սեղանի կանթեղից վառեց Տեր Հիսուս Քրիստոսին խորհրդանշող կենսատու մոմը, որը բաշխվեց հավատացյալներին:

Պատարագի սրբազան արարողությունից հետո Մայր Աթոռի միաբանությունը մեկտեղվեց Վեհարանում, ուր, նախագահությամբ Հայոց Հովվապետի, կատարվեց Սուրբ Հարության Տնօրհնեք:

Ավագ Հինգշաբթին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում

Ապրիլի 2-ին՝ Ավագ Հինգշաբթի, Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին հիշատակեց մեր Տեր և Փրկիչ Հիսուս Քրիստոսի Վերջին ընթրիքը և Սուրբ Հաղորդության խորհուրդի հաստատումը: Այս առիթով առավոտյան Մայր Տաճարում կատարվեց Ապաշխարողաց կարգ, այնուհետև՝ Միջօրեի ժամերգություն:

Ժամերգության ավարտին Միածնաէջ Տաճարում, ձեռամբ Մայր Աթոռի փոխլուսարարապետ Հոգեշնորհ Տ. Դավիթ աբեղա Օհանյանի, մատուցվեց Սուրբ և Անմահ Պատարագ՝ ի հիշատակ Վերջին ընթրիքի ժամանակ մեր Տեր Հիսուս Քրիստոսի կողմից Սուրբ Հաղորդության խորհրդի հաստատման:

Սուրբ Պատարագի ընթացքում ընթերցվեց նաև Սուրբ Բարսեղ Կեսարացու «Սուրբ Հաղորդության մասին» ճառը:

Մայր Աթոռում կատարվեց Ոտնլվայի կարգը

Ապրիլի 2-ին՝ Ավագ Հինգշաբթի, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ, Միածնաէջ Մայր Տաճարում կատարվեց Ոտնլվայի կարգը:

Սրբազան արարողության ընթացքում՝ սուրբգրային ընթերցումներից հետո, Ամենայն Հայոց Կաթողիկոսն օրհնեց խորանի վրա դրված ջուրն ու յուղը:

Ապա, շարականների երգեցողության ներքո, Նորին Սրբությունը Աստվածորդու օրինակով ծնրադիր լվաց և յուղով օծեց Մայր Աթոռի միաբաններ՝ Տ. Հայկազուն արքեպիսկոպոս Նաջարյանի, Տ. Հովհաննես աբեղա Թորգոմյանի, Տ. Մաշտոց աբեղա Մխիթարյանի, Արամայիս սարկավագ Ազիզյանի, Սերգեյ սարկավագ Բարսեղյանի, Սևանի Վազգենյան հոգևոր դպրանոցի Ե լսարանի սան Ալեն ուրարակիր Իսրայելյանի և Ա լսարանի սան Աբրահամ Հովհաննիսյանի, «Էօրնեկյան» հանրակրթական դպրոցի աշակերտներ Արտաշես Ղազարյանի, Կամսար Մարտիրոսյանի, ինչպես նաև Հայաստանի և սփյուռքի տարբեր համայնքներից հայորդիներ Վահագն Սահակյանի, Մոնթե-Լևոն և Սերոբ-Իշխան Եգիներյանների, Նարեկ Ղևոնդյանի, Դավիթ Մարտիրոսյանի, Ստեփան Սկրտչյանի, Նարեկ Տերտերյանի, Սարգիս Քոչարյանի և Լևոն Շարոյանի ոտքերը:



Արարողության ավարտին Ամենայն Հայոց Հայրապետը «Պահպանիչ» աղոթքով օրհնեց ներկա բարեպաշտ ժողովրդին, որից հետո օրհնված յուղը բաժանվեց հավատացյալներին:



Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի շնորհավորական ուղերձը Ավետման տոնի առիթով

*Ս*ուրբ Աստվածածնի Ավետման տոնի առիթով Հայրապետական Մեր օրհնությունն ու շնորհավորանքն ենք բերում բարեպաշտ մեր ժողովրդին ի հայրենիս և ի սփյուռս:

Հոգեպարար այս տոնը հռչակված է որպես օրհնության օր մայրության բերկրանքին սպասող կանանց: Եկեղեցիներում, հավարտ Սուրբ Պատարագի, աղոթական մաղթանք է կատարվում, և օրհնություն են ստանում ապագա մայրերը՝ հայցով, որ Աստված նրանց պարգևի սիրառատ, առողջ ու երջանիկ կյանք և բարի ու արժանավոր զավակներ:

Սուրբ Աստվածամոր հավատավոր ու առաքինի կերպարը դարեր շարունակ ներշնչման աղբյուր է եղել մայրերի համար: Սուրբ Տիրամոր լուսաշող օրինակով հայ կանայք դժվարին ժամանակներում Աստծո կամքին անվերապահ հնազանդությամբ հաղթահարել են ծառացած փորձություններ, ամուր ու անսասան պահել հավատն ու սերը առ Քրիստոս և ապրել առ ազգն ու հայրենին անխախտ նվիրումով:

Աղոթում ենք, որ Ամենակալ Տերը Սուրբ Աստվածածնի բարեխոսությամբ օրհնի մայրության բերկրանքին սպասող կանանց և շնորհի բարեհաջող ողջունելություն:

Թող Բարձրյալն Աստված հաղաղություն պարգևի համայն աշխարհին, ապահովության ու բարօրության մեջ պահպանի մեր հայրենիքն ու աշխարհասփյուռ մեր ողջ ժողովրդին: «Թող հույսի Աստվածը լիացնի ձեզ ամենայն ուրախությամբ և խաղաղությամբ» (Հռոմ. 15.13). ամեն:

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ուղերձը Սփյուռքի զորաշարժի համաժողովի առիթով

Համաժողովի հարգարժա՛ն մասնակիցներ,

Համայն հայության հոգևոր կենտրոն Աստվածակառույց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնությունն ենք հղում Սփյուռքի զորաշարժի համաժողովի մասնակիցներիդ: Ողջունում ենք կարևոր այս նախաձեռնությունը, որը կոչված է քննարկելու մեր ազգի առջև ծառացած ծանր ու դժվարին հիմնախնդիրները, հստակեցնելու դրանց դիմագրավման ուղիներն ու մեր համազգային առաջնահերթություններ, վերարժևորելու Հայաստան-Սփյուռք հարաբերությունները:

Այսօր մեր ժողովուրդը կանգնած է արտաքին և ներքին մարտահրավերների առջև: Խոր մտահոգություն են առաջ բերում մեր ազգային կյանքում պառակտվածությունը, ատելության սերմանումը, ազգային կառույցների թիրախավորումը, Հայաստան-Սփյուռք հարաբերությունների խաթարված վիճակը: Եկեղեցու, հայկական բոլոր կազմակերպությունների նպատակը նույնն է՝ համախմբել ազգային ներուժը, անվտանգ ու ապահով դարձնել համայն հայության հայրենիքը, բարվոքել Հայաստան-Սփյուռք գործակցությունը, անխաթար պահպանել ազգային ինքնությունը:

Համաժողովին մասնակից ավանդական կազմակերպությունները, ազգային միությունները ու գործիչները, որոնք ներկայացնում են հայության տարբեր հատվածներ, մեր Սուրբ Եկեղեցու օրհնության ներքո անժխտելի ներդրում են ունեցել հայոց անկախ պետականության վերականգնման և Սփյուռքի կենսունակության պահպանման նվիրական գործում: Անբեկանելի ճշմարտություն է, որ հայության և հայկականության հարատևության երաշխիքը լեզուն, հավատքը, ազգային դպրոցն է, հայրենի անկախ ու ինքնիշխան պետությունը, որի հատուկ հոգածության և ուշադրության ներքո պիտի գտնվեն նաև Սփյուռքը և Սփյուռքի առաջնային կարիքները: Եվ, հետևաբար, Հայոց պետության պահպանությունն ու զորացումը այսօր էլ աշխարհասփյուռ մեր ժողովրդի առաջնային հանձնառություն են: Հարկ է հոգ տանել նաև, որ յուրաքանչյուր հայ, չտրվելով օտար գաղափարների և ազդեցությունների, շարունակի իր ողջ էությամբ ու հոգով, դավանած արժեքներով կապված մնալ իր ազգին ու հայրենիքին և իր կարողություններն ու շնորհները ի սպաս դնի մեր ժողովրդի և հարազատ երկրի առաջընթացին:

Պատմական տարբեր հանգամանքների բերումով աշխարհի տարբեր երկրներում ձևավորված Սփյուռքի համայնքների կազմակերպվածությունը պետք է միասնական ուժի և զորության վերածենք՝ հանուն ազգի ու հայրենիքի շահերի պաշտպանության: Հիրավի, տկար կլինի հայրենիքը՝ առանց Սփյուռքի զորակցության ու նվիրումի, թույլ ու խոցելի կլինի Սփյուռքը՝ առանց հզոր ու պայծառ Հայոց պետության: Միմիայն Հայաստան-Սփյուռք փոխադարձ աջակցությամբ է հնարավոր հաստատուն ու բարօր պահել մեր ժողովրդի կյանքը՝ հիմնված նախնյաց սրբազան ժառանգության և միևնույն արժեհամակարգի վրա:

Այս առումով, սիրելինե՛ր, կարևոր առաքելություն ունեն Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին, ազգային մեր կառույցներն ու հաստատությունները, որպեսզի երբեք չտկարանա ու չհամրի աշխարհասփյուռ հայորդյաց ազգային-հոգևոր ինքնությունը և անսասան մնա Հայոց պետությունը: Անհրաժեշտ է վերահմաստավորել ազգային կյանքի մերօրյա ընթացքները և համախոհության մեջ գործուն միջոցներ ձեռնարկել՝ կասեցնելու հայրենավնաս, ազգակործան երևույթները: Այսպիսի համաժողովներն ու խորհրդակցությունները կարևոր քայլ են վերոհիշյալ հիմնախնդիրների հաղթահարման և լուծման ճանապարհին:

Զատկական այս օրերին Հայրապետիս աղոթքն է, որ Բարձրյալն Աստված իմաստություն շնորհի պետությունների ղեկավարներին՝ խաղաղություն վերահաստատելու աշխարհում և մարդկության կյանքում: Թող Փրկիչ մեր Տերը ապահով ու անվտանգ պահպանի հայրենի մեր երկիրը և Իր Սուրբ Հարության լույսով պայծառացնի համայն մեր ժողովրդին՝ անշեղորեն ընթանալու աստվածահաճո, բարեբեր ուղիներով և տերունավանդ հավատով կերտելու հայոց նորոգյալ կյանքն ու լուսավոր գալիքը:

Մեր գնահատանքն ենք բերում համաժողովի աշխատանքների կազմակերպիչներին ու բոլոր մասնակիցներին և մաղթում արդյունավոր ընթացք:

Օրհնությամբ՝
ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
Փարիզ, ապրիլի 11–12, 2026 թ.

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց «Ռենովաբիս» բարեգործական կազմակերպության գլխավոր գործադիր տնօրենի առաջնորդած պատվիրակությանը

Ապրիլի 8-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ընդունեց «Ռենովաբիս» բարեգործական կազմակերպության գլխավոր գործադիր տնօրեն դոկտոր Հայր Թոմաս Շվարցի առաջնորդած պատվիրակությանը, որի կազմում ընդգրկված էին եվրոպական տարբեր լրատվամիջոցների ներկայացուցիչներ:

Հանդիպմանը Հայր Թոմաս Շվարցը Նորին Սրբությանը ներկայացրեց պատվիրակության անդամներին՝ ընդգծելով, որ վերջիններս Հայաստան են ժամանել՝ տեղում ծանոթանալու երկրում առկա իրավիճակին և եկեղեցական ու հասարակական կյանքի ներկա իրողություններին:

Վեհափառ Հայրապետը, ողջունելով հյուրերի այցը Հայաստան և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, անդրադարձավ Հայոց Եկեղեցու՝ հայ ժողովրդի կյանքում կարևոր դերակատարությանը, արձանագրեց, որ պատմության ամենադժվար պահերին Եկեղեցին իր հոգեխնամ և ազգապահպան առաքելությամբ առաջնորդել է ազգին՝ հավատով և հույսով դիմագրավելու բոլոր մարտահրավերներին: Նորին Սրբությունն իր խոսքում անդրադարձ կատարեց նաև Հայաստանում և տարածաշրջանում առկա մարտահրավերներին ու զարգացումներին:

Վերջում Ամենայն Հայոց Հայրապետը պատասխանեց հյուրերի հարցերին, որոնք առնչվում էին Եկեղեցի-պետություն հարաբերություններին, Հայաստանյայց Առաքելական և քույր եկեղեցիների փոխհարաբերություններին, ինչպես նաև տեղահանված արցախահայերին ուղղված՝ Եկեղեցու կողմից իրականացվող սոցիալական ծրագրերին:



Հայտարարություն

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը խստորեն դատապարտում է «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության նախընտրական ծրագրում Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու վերաբերյալ մերժելի դրույթների ընդգրկումը:

Կուսակցության նախընտրական ծրագրում Եկեղեցու բարենորոգման, կանոնադրության վերանայման, Ամենայն Հայոց Կաթողիկոսի հեռացման և կաթողիկոսական նոր ընտրությունների անցկացման պարտադրվող օրակարգի ամրագրումը սահմանադրական կարգի, Եկեղեցու ինքնակառավարման իրավունքի, ինչպես նաև խղճի ու կրոնի ազատության միջազգային հիմնարար սկզբունքների բացահայտ ոտնահարում է:

Եկեղեցու դեմ ակնհայտ ապօրինի գործողությունները շարունակելու նախընտրական խոստումներով ևս մեկ անգամ դրսևորվում են իշխող քաղաքական ուժի գաղափարախոսության հակաեկեղեցական ողջ էությունը և նպատակը: Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հազարամյա առաքելությունը, նրա սրբազան ավանդույթներն ու հոգևոր կյանքը չպետք է քաղաքական շահարկումների առարկա դառնան: Ինչպես քանիցս Մայր Աթոռը հաստատել է, կաթողիկոսի ընտրությունը և եկեղեցական անդաստանում որևէ բարեկարգում բացառապես հոգևոր-կանոնական տիրույթում են, ուստի և դուրս են քաղաքական կուսակցությունների և պետական իշխանությունների իրավասություններից:

Որդեգրված օրինախախտ գործելաոճն ազգավնաս է և բացարձակ անթույլատրելի: Այն հակասում է մեր աշխարհասփյուռ ժողովրդի շահերին, վտանգում ազգային արժեհամակարգի հիմերը և խաթարում հոգևոր անվտանգությունը:

9.04.2026

Հայտարարություն

ՀՀ վարչապետի՝ 2026 թ. մարտի 27-ի որոշմամբ Արման Սարոյանը (նախկին Գևորգ եպիսկոպոսը) նշանակվել է «Ներման հարցերի քննարկման խորհրդակցական հանձնաժողովի» անդամ՝ որպես Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու ներկայացուցիչ:

Սույն նշանակումը, որը կատարված է առանց Հայ Առաքելական Եկեղեցու համաձայնության, անընդունելի է ու անօրինական, ինչպես նաև խախտում է ՀՀ օրենսդրությունը:

Պետական կամ որևէ այլ կառույցում Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու ներկայացուցիչ կարող է նշանակվել միայն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի և Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ ու արտոնությամբ: Իսկ կարգալույծ հռչակված Գևորգ եպիսկոպոսը լիազորված չէ և չի կարող ներկայացնել Հայոց Եկեղեցին ոչ կանոնական, ոչ իրավական և ոչ էլ բարոյական տեսանկյունից:

Այս քայլը հերթական ոտնձգություն է Հայոց Եկեղեցու ինքնավարության և Ամենայն Հայոց Կաթողիկոսի կանոնական իրավասությունների նկատմամբ:

Հարկ է, որ պաշտոնական փաստաթղթից՝ ՀՀ վարչապետի որոշումից, վերացվի նշյալ կեղծ տեղեկությունը:

13.04.2026 թ.

Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր օրհնությունը բաշխեց ուխտավոր եկեղեցասեր երիտասարդներին

Ապրիլի 12-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ընդունեց Հայաստանի տարբեր թեմերից ուխտավորաբար Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին ժամանած շուրջ 650 եկեղեցասեր երիտասարդների՝ առաջնորդությամբ իրենց հոգևոր հովիվների:

Հանդիպումն սկսվեց Տերունական աղոթքով և Հայրապետական մաղթերգով: Ապա ՀԵՀԵՄ հոգևոր տեսուչ և Կենտրոնական գրասենյակի տնօրեն Հոգեշնորհ Տ. Թովմա վարդապետ Խաչատրյանը Նորին Սրբությանը ներկայացրեց ուխտավոր հայորդիներին՝ նշելով, որ երիտասարդները Սուրբ Հարության տոնի խորհրդով այցելել են Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին՝ մասնակցելու Սուրբ Պատարագին և ստանալու Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայրական օրհնությունը:

Քահանա հայրերի անունից ողջույնի և երախտիքի խոսքով հանդես եկավ Արժանապատիվ Տ. Մակար քահանա Գալամդարյանը (Շիրակի թեմ): Իր խոսքում Տեր Հայրն ընդգծեց, որ երիտասարդների ցանկությանն ընդառաջ՝ երիտասարդաց միությունների պատասխանատու քահանա հայրերը կազմակերպել են այս ուխտագնացությունը դեպի Մայր Աթոռ՝ իրենց ուխտը նորոգելու, հավատքի մեջ զորանալու և Սուրբ Էջմիածնի օրհնությամբ շարունակելու իրենց կյանքը իբրև Մայր Եկեղեցու հավատարիմ զավակներ:

Երիտասարդների անունից սրտի խոսք ասացին Շիրակ թեմից՝ երեցկին Գոհարիկ Գալստագազյանը, Արագածոտնի թեմից՝ Նաիրա Դավթյանը, Սյունյաց թեմից՝ Մարիա Աթաեսյանը, Մասյացոտնի թեմից՝ Մանե Մնացականյանը, Գուգարաց թեմից՝ Սարգիս Գալստյանը:

Ապա ներկաներին հայրապետական իր պատգամն ու օրհնությունը բերեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

«Սիրելի՛ զավակներ Մեր,

Ողջունում ենք ձեզ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում և բերում ամենքիդ Հայրապետական Մեր սերն ու օրհնությունը: Ուրախ է Մեր հոգին, որ Զատկական այս հոգեշնորհ օրերին դուք համախմբվել եք Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում՝ դրսևորելով ձեր որդիական սերն ու նվիրումը առ Հայոց Եկեղեցին:

Առաքելական ժամանակներից ի վեր մեր Սուրբ Եկեղեցին լուսավոր փարոս է մեր ժողովրդի կյանքում՝ իր զավակներին հաստատելով հավատի և հույսի մեջ և առաջնորդելով դեպի Աստված, դեպի բարին ու ճշմարիտը: Հայոց Եկեղեցին մեր ժողովրդի հոգևոր տունն է, որտեղ յուրաքանչյուր հա-



յորդի գտնում է սեր, խնամք ու հոգատարություն և զորանում երկնառաք շնորհներով ու օրհնություններով: Ով ցանկանում է ճանաչել հայ ժողովրդի հոգին, հայացքը պիտի ուղղի Հայոց Եկեղեցուն: Մեր Եկեղեցին ուժ է տվել իր զավակների՝ ապրելու և արարելու ձգտումներին և խաղաղության ու արդարության իղձերին: Մեր Եկեղեցին զորություն է պարգևել ազգ ու հայրենիք սիրելու և հավատարիմ իր առաքելությանը՝ պահպանել ու հարստացրել է մեր հոգևոր ու մշակութային ժառանգությունը, հետամուտ եղել նոր սերնդի հայեցի դաստիարակությանը: Տերունավանդ քրիստոնեական արժեքներով մեր Եկեղեցին աշխարհասփյուռ հայության համար դարձել է միասնության հիմնասյուն՝ առաջնորդելով իր հոտը թե՛ խաղաղ օրերին և թե՛ փորձությունների ժամանակ:

Իր այս առաքելության ճանապարհին Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու առջև հաճախ հարուցվել են տարատեսակ խոչընդոտներ ու դժվարություններ: Այսօր էլ ունենք անցանկալի մի իրավիճակ, երբ հայրենի մեր երկրում Եկեղեցին թիրախավորված է իշխանության ներկայացուցիչների կողմից: Վերջին մեկ տարում ականատես ենք անախադեպ ճնշումների՝ եպիսկոպոսների աւօրհնական ձերբակալությունների, հոգևոր սպասավորության իրականացմանն ուղղված արհեստական խոչընդոտների, մեր հնամենի վանքերի ու եկեղեցիների բռնազավթման փորձերի: Իշխանությունների ակնհայտ հովանավորչությամբ Մասյացոտնի թեմի առաջնորդի պաշտոնից ազատված և կարգալույծ հռչակված անձը շարունակում է զավթված պահել առաջնորդարանը և դատարանի ու հարկադիր կատարումն ապահովող ծառայության ապօրինի որոշումներով՝ աշխարհիկ կարգավիճակով գործել որպես թեմական առաջնորդ: Օրերս նաև հերթական հակասահմանադրական քայլին ականատես եղանք, երբ իշխող քաղաքական ուժն իր նախընտրական ծրագրում ներառեց Հայ Եկեղեցուն վերաբերող մերժելի դրույթներ: Այս ամենը, ինչպես քաջատեղյակ եք, ուղեկցվում է շինծու մեղադրանքներով, անհանդուրժողականության հրահրմամբ, բացահայտ սպառնալիքներով:

Պատմությունը, սակայն, վկայում է, որ առ Աստված ապավինությամբ մեր Եկեղեցին միշտ հաղթահարել է բոլոր փորձությունները: Այսօր էլ Հայ Եկեղեցին մնում է մեր ազգային վերելքի նախանձախնդիր սպասավորը, մեր երկրի զորացման, հասարակական համերաշխության անդավաճան ջատագովը և շարունակելու է պաշտպանել մեր ազգային իրավունքները, իղձերն ու նպատակները:

Սիրելինե՛ր, մեր Սուրբ Եկեղեցու առաքելության արդյունավորման գործում կարևոր առաջնահերթություններից է ձեր՝ երիտասարդ սերնդի ակտիվ ներգրավումը եկեղեցական կյանքում: Այս նպատակով մեր եկեղեցիների շուրջ ստեղծված երիտասարդական միությունները հետևողականորեն իրականացնում են տարբեր ծրագրեր ու նախաձեռնություններ, որոնք նպատակ ունեն ամրապնդելու և խորացնելու նոր սերնդի կապը մեր Մայր Եկեղեցու հետ: Դուք և ձեր հասակակիցներն եք մեր հայրենիքի զորացման, մեր Սուրբ Եկեղեցու պայծառության և մեր ժողովրդի լուսավոր ապագայի երաշխավորը: Ամո՛ւր պահեք կապվածությունը Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցուն և ընդունեք դարերով սրբագործված նրա ավանդները՝ իբրև ուղեցույց ձեզ համար, որպեսզի լինեք ինքնուրույն, արժանավոր և ուժեղ անհատներ: Սիրեք Հայրենին, մեր Սուրբ Եկեղեցին, եղեք բարեպաշտ հավատացյալներ ու օրինահարգ քաղաքացիներ:

Հայրապետական Մեր սերն ու օրհնությունն ենք բերում ձեզ՝ ձեր ջերմ հավատքի և եկեղեցանվիրումի համար: Մաղթում ենք ձեզ ամենայն բարիս և հայցում, որ Բարձրյալն Աստված օրհնի ձեր ընթացքը, պարգևի անսասան և անսպառ հավատք, հույս ու սեր և զորացնի ձեզ բոլոր բարի ձեռնարկներում:

Մեր բարձր գնահատանքն ենք բերում՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին այս ուխտագնացությունը կազմակերպելու համար, Հայ Եկեղեցու Երիտասարդական կազմակերպությանց կենտրոնական գրասենյակի տնօրեն հոգեշնորհ Տ. Թովմա վարդապետ Խաչատրյանին, թեմերի երիտասարդաց միությունների պատասխանատու քահանա հայրերին, վարչական խորհուրդների անդամներին ու ատենապետերին: Հայրական մեր պատգամն է ձեզ, որ նույն նախանձախնդրությամբ շարունակեք ներդնել ձեր ջանքերը՝ նորանոր նախաձեռնություններով առավել կենսունակ ու աշխույժ դարձնելու երիտասարդաց միությունների գործունեությունը՝ ի զորացումն Հայրենի մեր Երկրի, ի պայծառություն մեր Սուրբ Եկեղեցու և ի բարօրություն քրիստոսասեր մեր ժողովրդի:

Թող Տիրոջ շնորհները, սերն ու խաղաղությունը մշտապես ուղեկից լինեն ազգիս հայոց ի Հայրենիս և ի Սփյուռս. ամեն»:

Օրհնության խոսքից հետո Ամենայն Հայոց Կաթողիկոսը պատասխանեց նաև երիտասարդների հարցերին, որոնք առնչվում էին Հայ Եկեղեցու երիտասարդական ծրագրերին, հովվական գործունեությանը և Եկեղեցու առաքելությանն ի նպաստ երիտասարդների ներգրավվածությանը:

Հանդիպումը եզրափակվեց «Պահապանիչ» աղոթքով, որից հետո երիտասարդները Միածնաէջ Մայր Տաճարում մասնակցեցին Սուրբ և Անմահ Պատարագին:

Լրատվական նյութերը՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տեղեկատվական համակարգի

Ապաշխարության ճանապարհը

Ա. Փոքր պատուհասով Աստված կանխում է գալիք մեծ չարիքը

Քրիստոսի առաքելությունն սկսվում է ապաշխարության կոչով, որը Նրա առաջին քարոզչությունն է Ավետարաններում. «Ապաշխարեցէ՛ք, որովհետև երկնքի արքայութիւնը մօտեցել է» (Մատթ. 4:17): Մեր հոգևոր կյանքում հաճախ ենք լսում ապաշխարության կոչերը, քանի որ ապաշխարությամբ են սկսվում մեր սրտի մաքրագործումը, հոգևոր կյանքի ճամփորդությունը դեպի ներս ու դեպի արքայություն («Աստծու արքայութիւնը ներսում՝ ձեր մէջ է» (Ղուկ. 17:22)), ինչպես նաև աստվածատեսությունը: Ապաշխարությունը ողջ կյանքի տևողություն ունի, առանց որի՝ մենք անկարող ենք ընթանալ Ավետարանի կանչող փրկության նեղ ու անձուկ ճանապարհով:

Ապաշխարության վերաբերյալ է նաև Տիրոջ այս խոսքը. «Ես արդարներին կանչելու չեմ եկել, այլ՝ մեղաւորներին» (Մատթ. 9:13): Հասկանալի է, որ Քրիստոսի այս խոսքն ուղղված է նրանց, ովքեր իրենց մեղքերի համար զղջալու ունակություն և դրանց չվերադառնալու վճռականություն ունեն: Իսկ «արդարի» բարդույթով տառապում են նրանք, ովքեր ապաշխարության և զղջումի կարիք ու անհրաժեշտություն չեն զգում: Ըստ ամենայնի՝ դրանք ինքնահմայվածներն ու հպարտության մեղքի բարդույթով բռնվածներն են, և այդ վիճակն ատելի է ու նողկանք է պատճառում Աստծուն: Ցավալիորեն, հոգեպես անբուժելի ու անամոքելի է դառնում «արդարի» այդպիսի կերտվածքը, քանի որ իսպառ բացակայում է սեփական անձի մեղավորության գիտակցությունը: Գիտակցություն ասելով՝ նկատի չունենք սեփական անձի մասին մեղավորության հանգամանակներն ու զուտ կանոնավոր խոսքերը կամ ապաշխարության մասին անձև ու անկերպարանք գիտելիքները, այլ Եկեղեցու կենդանի վարդապետությունն ու ապաշխարության փորձուսումը, և ո՛չ այնպես, ինչպես այն մենք ենք հասկանում, կամ մեզ է ձեռնտու:

Ըստ Եկեղեցու վարդապետության՝ ապաշխարության փորձուսումն անտեսելն ու անկարևոր համարելն արդեն իսկ Եկեղեցու հանդեպ անհնազանդության, հետևաբար՝ հպարտության դրսևորում են:

Բ. Դրսից դեպի ներս

Քրիստոս ամեն օր սովորեցնում է մեզ՝ ասելով. «Ո՛չ, ասում եմ ձեզ, սակայն, եթէ չապաշխարէք, ամէնքդ էլ նոյնպէս պիտի կորչէք» (Ղուկ. 13:3): Մի կողմից՝ մեր բոլոր տառապանքներն ու աղետները մեր մեղքերի հետևանքներն են: Օրինակներ ունենք Սուրբ Գրքից, ինչպես՝ ջրհեղեղը կամ կրակով ու ծծումբով կործանված Սոդոմն ու Գոմորը: Երկու դեպքում էլ կործանման պատճառը մեղքն է, իսկ անապաշխար մեղքի հետևանքը՝ Աստծո վերահաս պատիժը:

Հոգու զղջման գործընթացը միշտ ծածուկ՝ խորհրդական ընթացք ունի, ապաշխարության և զղջման մեջ են խտացված Աստծո բովանդակ պատվիրանները: Որքան խորն է մեղքի ու ապաշխարության գիտակցությունը, նույնքան մաքրվում են հոգին ու սիրտը:

Ապաշխարությունը, զղջումը, արցունքները շնորհներ են, որ Աստված է տալիս և տալիս է նրանց, ովքեր դրանք փնտրում և անդադար խնդրում են Նրանից:

Գ. Անզեղջ մեղքը

Անզեղջ մեղքը մարդուն Աստծուց օտարացնում է, և այն ոչ միայն Աստծո հանդեպ դավաճանություն է, այլև համաձայնություն, դաշինք և միություն՝ դիվական ուժերի հետ: Անզեղջ մեղքը պարունակում է հատուցում և պատիժ: Այս իմաստով՝ սարսափելի ու ծանր են հավաքական անզեղջ մեղքի հետևանքները, որոնք անպայման լինում են մեծ աղետներ ու հեղաշրջումներ՝ բնական և ոչ բնական, որոնց միջոցով կործանվում են քաղաքակրթություններ, ազգեր, ընտանիքներ, մարդիկ:

Սակայն Ավետարանում Տերն զգուշացնում է. «Կարծո՞ւմ էք, թէ այն գալիլիացիները, որոնք այդպիսի պատահարների ենթարկուեցին, աւելի՞ մեղաւոր էին, քան բոլոր գալիլիացիները» (Ղուկ. 13:2): Եթե մենք ավետարանական այս ընթերցումն արտապատկերենք այսօրվա իրականության մեջ, ապա մեր ներկա նեղությունների օրինակով կարելի է խորապես ընկալել տերունական այս կոչը, հասկանալ նրա բովանդակ էությունը: Աստծո պատուհասն այժմ և վաղուց վրա է հասել մեր ազգին, և այս պարագայում դասեր քաղում ենք ոչ թե այլոց սխալներից ու դրանց հետևանքներից, այլ սեփական մեղքերով վաստակած Աստծո պատժից ու մեր տառապանքի փորձից:

Դ. Աստծո խրատը

Ստեղծված իրողության հենքի վրա, անշուշտ, եթե հոգևոր լրջությամբ ենք դիտարկում Աստծո՝ այս ցնցումներով ապաշխարության կոչի ահազանգը, հարկ է, որ քրիստոնյան ինքնաքննությամբ հետևություններ անի, որոշումներ ընդունի ու վճիռներ կայացնի մտքի, սրտի և հոգու արմատային փոփոխության և նոր արարած, նոր Ադամ դառնալու առնչությամբ: Քանի որ, փաստորեն, այլ կերպ չի ստացվում մեր ուշադրությունը հպարտության, գոռոզության, նյութապաշտության և այլ անզեղջ մեղքերից ազատելն ու կարևորի՝ հոգու հավիտենական փրկության, սրտի մաքրության և ներանձն լինելու վրա սևեռելը. «Եթէ չապաշխարէք, ամէնքդ էլ նոյնպէս պիտի կորչէք» (Ղուկ. 13:3): Իսկ յուրաքանչյուր մեղքի զղջումն ու համարժեք հատուցումը քանդում են անեծքի, պատժի, պատուհասի և կախվածությունների շղթան:

Ուրեմն՝ եթե դասեր չենք քաղում այլոց ցավալի պատուհասներից, ապա գոնե մեր մեղքերի պատճառով մեզ հասած ողբերգությունների իրողությունն ընդունենք: Աստված ուզում է, որ մենք ակամա նեղությունների գնով ու ակամա զրկանքների միջոցով դասեր յուրացնենք ու ամրագրենք՝ որպես 21-րդ դարի հայ քրիստոնյա: ↪ *էջ 8*

Զատկական խորհուրդը Հին և Նոր ուխտերում

Տիսուս Քրիստոսի Հարության տոնը համաքրիստոնեական մեծագույն տոն է: Այն մեղավոր մարդկության փրկության հույսն է, աստվածային հրաշք՝ հանուն մարդկության՝ ապրելու, հարատևելու, անմահանալու, չվերջանալու, չանհետանալու, չոչնչանալու հռչակումով: Մեծագույն այս տոնի հիշատակումը բացառիկ է, եզակի, բոլոր տոներից տարբերվող: Տիրոջ Հարության տոնախմբումը ոչ միայն պատմական հիշարժան ու փառահեղ այդ իրադարձության վկայակոչումն է, այլև դրա վավերական շարունակությունը այսօր և վաղը:


Հարության տոնը, որ կոչվում է նաև Զատիկ, հիրավի, շոշափում է ադամորդու մեծագույն բաղձանքը՝ ապրելու բնական ցանկությունը: Իսկապես, եթե քննենք մեր մտքերը, խոսքերն ու գործերը, հայացք ուղղենք դեպի մեր ներաշխարհը, կտեսնենք, որ այն ամենը, ինչ անում ենք, ունի մեկ նպատակ՝ ապրել: Մենք ցանկանում ենք սնվել, որովհետև հակառակ դեպքում կհյուծվենք, կտկարանանք, կմահանանք: Մեզ հագուստ է անհրաժեշտ՝ կրկին նույն նպատակով: Մենք սիրում ենք գումար, նյութական ամեն տեսակի միջոցներ և հարմարություններ, որովհետև այդ ամենն ուղղակիորեն խթանում է մեր բարվոք կյանքը: Կենսական այս անհրաժեշտությունները (սնունդ, հագուստ, կացարան) բավարարելու կարողությունն ունենալուց հետո մարդկային բնությունն արդեն հարատևություն է որոնում աննյութեղեն՝ իր կերտած հոգևոր-մշակութային աշխարհի ծիրում: Նկարիչը ձգտում է մի պատկեր հեղինակել, որով իր անունը հիշատակելի կլինի բոլոր ժամանակների արվեստագետների շրջանում, երաժիշտը՝ մի համանվագ, քանդակագործը՝ որևէ եզակի կոթող, և այսպես շարունակ: Անմահության այս տենդով վառված են պատերազմի նետվում նաև ռազմատենչ զորավարներն ու աշխարհակալ տիրակալները: Յուրաքանչյուր ոք, ով ապրում է, ցանկանում է շարունակել ապրել կամ գոնե ապրեցնել իր անունն ու հիշատակը: Ահա այս ցանկությունը մարդահատուկ օրինաչափությամբ կրկնվում է ամեն ծնվող անհատի հետ: Այս առումով՝ Հարության խորհրդին պետք է նախ և առաջ մոտենալ մարդկային ներաշխարհի խորքային քննության դիրքերից:

Ծննդոց Գրքում վկայակոչված Աբրահամի ու Սառայի ցավն անժառանգությունն էր, և նրանց մորմոքը բխում էր անհիշատակ մահանալու մտածումից: Այնուհետև երբ Աստծու պատգամով Աբրահամն իր միանուճար որդուն՝ Իսահակին, տանում էր նահատակության ճանապարհով, նա սարսափում էր կրկին, որ իր որդու մահվամբ կխզվի նաև իր հիշատակը: Նույնպես՝ երբ մեծ սովի տարիներին Հակոբի որդիները ճամփա էին ընկնում դեպի Եգիպտոս, նրանք հույս էին տածում, պարեն և սնունդ գնելով, կանխել իրենց մեծ ազգատոհմին սպառնացող սովամահությունը: Սրանք երկու փոքրիկ օրինակներ են, որոնք փաստում են, որ մարդկանց ապրելու մեծ ցանկությունը լսելի եղավ Աստծուն, և օրհնության արժանացրեց:

Խոսելով Զատկից՝ հարկ ենք համարում անպայմանորեն անդրադառնալ առաջին՝ նախնական Զատկի պատմությանը, առանց որի իմացության՝ հնարավոր չէ ընկալել այս խորհուրդը՝ իր բովանդակային ամբողջությամբ:

Վերոհիշյալ մեծ սովի տարիներին նախահայր Հակոբն իր ընդոծիններով տեղափոխվեց Եգիպտոս, հաստատվեց այնտեղ, և դարերի ընթացքում Եգիպտական թագավորությունում ձևավորվեց հրեական ազգային փոքրամասնություն: Համաձայն Սուրբ Գրքի՝ հրեաները 430 տարի ապրեցին այնտեղ՝ մեծ մասամբ զբաղվելով աղյուսագործությամբ և չարքաշ գործերով: Ելից Գիրքը հստակորեն շեշտում է, որ հրեաները հալածվում էին Եգիպտոսում, տեղացիների կողմից ենթարկվում նվաստացումների. «Եգիպտացիները բռնությամբ ճնշում էին նրանց ու դառնացնում էին նրանց կյանքը տաժանակիր աշխատանքով՝ կավագործությամբ, աղյուսաշինությամբ ու դաշտային զանազան գործերով: Բոլոր գործերում նրանց ծառայեցնում էին ստրկաբար» (Ելք 1:13–14): Այդ ժամանակ Եգիպտոսում իշխանության եկած նոր փարավոնն անբարյացակամ էր տրամադրված հրեաների նկատմամբ, քանի որ կարծում էր, որ հրեաների աճող թիվը կարող է սպառնալիք դառնալ իրենց թագավորության համար, հրեաները կարող են երկրի թշնամիների հետ ներպետական դավադրություն նախաձեռնել: Փարավոնը հատուկ գործավարներ կարգեց, որ հրեաներին չարչարեն աշխատանքով: Նա անգամ չերկմտեց՝ դիմելու սարսափելի մի միջոցի՝ որ էր նորածին հրեաներին սպանելու՝ մանկաբարձներին ուղղված հրամանը:

Ծանրագույն այս պայմաններն այլևս անհնարին էին դարձնում հրեաների գոյությունը Եգիպտոսում: Եգիպտական կառավարությունն ուղղակի գոյաբանական ճգնաժամ էր հարուցել այս ցեղախմբի համար, և փրկության միակ լուծումը մնացել էր Եգիպտոսից գաղթելը: Տերը տեսավ հրեաների տառապանքը: Աստված ի վերջո վճիռ հայտնեց, որ կայացրել էր Իր ընտրյալ ժողովրդի գոյության համար: Մի անգամ, երբ Մովսեսն իր աներոջ հոտերն էր արածեցնում անապատում՝ Աստծո Քորեբ լեռան մոտ, Տերը կրակի բոցով մորենու միջից երևաց նրան, հայտնեց Իր Սուրբ անունը և ասաց. «Ես իսկապես տեսա իմ ժողովրդի չարչարանքը Եգիպտոսում և լսեցի նրանց աղաղակը իրենց գործավարների պատճառով, գիտեմ նրանց վշտերը և իջա՝ փրկելու նրանց եգիպտացիների ձեռքից, հանելու նրանց այն երկրից ու տանելու բարի ու ընդարձակ մի երկիր, որ կաթ ու մեղր է բխեցնում....» (Ելք 3:7–8):



Կարլ Բլոխ, Քրիստոսի հարությունը, 1875 թ.

Աստված լսեց արդարության քաղցն ու ծարավն ունեցող, ողորմություն աղերսող, խաղաղություն տենչացող և սգավոր Իր ժողովրդի ձայնը, հագեցրեց, ողորմեց ու Իր մխիթարությունը բերեց նրան:

Մովսեսի առաջնորդությամբ, սակայն, հրեա ժողովրդի համար դեռ անպատմելի չարչարանքներ էին առջևում պահված. ազատության համար մեծ գին էր պետք վճարել:

Համաձայն Տիրոջ պատվերի՝ Մովսեսն ու իր եղբայր Ահարոնը ներկայացան փարավոնին և պահանջեցին ազատ կացուցել Աստծո ժողովրդին, որպեսզի վերջիններս գնան անապատ՝ Տիրոջը զոհ մատուցելու: Փարավոնի առջև, բնականաբար, Ահարոնն ու Մովսեսը չէին կարող ուղղակիորեն ասել, որ հրեաները պատրաստվում են անվերադարձ լքելու երկիրը: Այդ դեպքում ելքը բացառված կլիներ: Ահա թե ինչու էին նրանք խորամանկում՝ նշելով, թե պարզապես պատրաստվում են ժողովրդին առաջնորդելու անապատ՝ Արարչի համար զոհաբերություն կատարելու:

Եգիպտական իշխանությունը, ինչպես սպասելի էր, չընդառաջեց Մովսեսին և Ահարոնին և չարտոնեց իրականացնել նրանց պահանջը: Աստված մեծամեծ տասը հարված հասցրեց ամբողջ Եգիպտոսին՝ փարավոնից մինչև դաշտում աշխատող հողագործը, այն աստիճանի, որ ի վերջո փարավոնը թույլատրեց հրեաներին հեռանալ:

Այսպիսով՝ հրեաների ավելի քան չորսհարյուրամյա պանդխտությունն ավարտվեց, Աստված նրանց առաջնորդեց դեպի Սինայի անապատ՝ փրկելով կործանումից ու ոչնչացումից: Մինչ հրեաները կլքեին Եգիպտոսը, Տերը խոսեց Ահարոնի և Մովսեսի հետ՝ ասելով. «Այս ամսի տասներորդ օրը ամեն մարդ թող մի գառ առնի իր ընտանիքի համար՝ ամեն մի տան համար մի գառ: Եթե մի տանը քիչ են, որ չեն կարող մեկ գառ ուտել, ապա թող կանչեն իրենց հարևանին կամ ընկերոջն այն հաշվով, որ բավարար լինեն գառի համար» (Ելք 12:3–4), «Առավոտյան դրանից ոչինչ թող չմնա: Եվ ոչխարի ոսկորները մի՛ ջարդեք, ու ինչ որ ավելանա առավոտյան, կրակով կայրեք: Կուտեք այսպես. ձեր գոտիները թող ձեր մեջքին լինեն, ձեր կոշիկները՝ ձեր ոտքերին, ձեր ցուպերը՝ ձեր ձեռքին: Արագ կուտեք, որովհետև Տիրոջ զատիկն է» (Ելք 12:10–11):

Ահա այսպես է, որ հաստատվեց Զատիկը՝ որպես փրկության, ազատության տոն: Այն Աստծու կողմից հաստատվեց և ոչ թե մարդկանց: Աստված նաև պատվիրեց Զատիկը տոնել բոլոր ժամանակներում՝ բոլոր սերունդների օրոք՝ ասելով. «Այդ օրը ձեզ համար հիշատակի օր թող լինի, և դուք իբրև Տիրոջ տո՛ն տոնեք այն սերնդեսերունդ, որպես հավիտենական օրենք տոնեք այն» (Ելք 12:14), «Եվ եթե պատահի, որ ձեր որդիները հարցնեն ձեզ, թե՝ «Ի՞նչ է այս ծեսը», նրանց կասեք, որ սա Տիրոջ համար զատկի զոհն է, երբ եգիպտոսում խնայեց Իսրայելի որդիների տները, մինչ հարվածում էր եգիպտացիներին, և մեր տները փրկեց» (Ելք 12:26–27):

Զատիկը դարձավ հրեական ամենակարևոր տոնը: Այս տոնի վրա խարսխվեց Իսրայելի ժողովրդի հետագա ողջ պատմությունը: Սերունդները կրթվում և դաստիարակվում էին Տիրոջ հանդեպ երախտապարտության ոգով՝ հասկանալով, որ Աստված ազատեց իրենց նախնիներին մարմնական, բարոյական և, որ ամենակարևորն է, հոգևոր ստրկությունից, քանի որ ստրկության գերադրական վիճակը հոգեմտավոր շղթայվածությունն է, ճշմարիտ ու միակ Աստծուն պաշտելու անկարողությունը: Այս առումով՝ Զատիկը՝ որպես ամենամյա տոն, պետք է դառնար հրեա ժողովրդի գաղափարական առանցքը՝ մշտապես սթափությամբ լցնելու հրեաների սրտերը, հիշեցնելու, թե ինչպես հնարավոր դարձավ նրանց ազգային գոյության շարունակականությունը: Այն պետք է դառնար հոգևոր ելակետ ողջ ժողովրդի համար՝ վերաիմաստավորելու իր անցյալը, քննելու ներկան և այդ լույսի ներքո հայացք ուղղելու գալիքին:

Ուշագրավ է, որ անապատում Աստված պատգամեց Իր ժողովրդին՝ իր շարքերում ապրող օտարերկրացիների հետ չվարվել անգթությամբ և չստորացնել նրանց: «Պանդուխտին մի՛ նեղեք,– ասաց Աստված,– դուք գիտեք պանդուխտ մարդկանց վիճակը, որովհետև դուք ևս պանդուխտ էիք եգիպտացիների երկրում» (Ելք 23:9): Ասել է թե՝ դեռ Հին Կտակարանում Աստված Իր ժողովրդին պատվիրեց առաջնորդվել փոխադարձ վարվեցողության այն «Ոսկե Կանոն»-ով, որը հետագայում արդեն պետք է բառացիորեն ձևակերպվեր Հիսուս Քրիստոսի շուրթերով:

Կարևոր է նշել նաև, որ հետագայում, երբ հրեա ժողովուրդը մեծ մարտահրավերների գնով ի վերջո ժառանգեց Տիրոջ շնորհած Ավետյաց երկիրը, ունեցավ կառավարիչներ և թագավորներ, պատահեց այնպես, որ շատ հաճախ կռապաշտ ու նենգ առաջնորդների պատճառով Զատկի տոնը կատարելու անբեկանելի պատվիրանն ապօրինաբար խախտվեց, ժողովուրդը որոշ տարիների չտոնախմբեց կարևորագույն այդ տոնը: Սակայն Ք. ա. 7-րդ դարում Հուդայում գահակալեց աստվածավախ ու բարեպաշտ Հովսիա արքան, որը վերանորոգեց հրեաների դաշինքն Աստծո հետ և իր թագավորության 18-րդ տարում՝ մոտավորապես Ք. ա. 622 թ., պատվիրեց իր ժողովրդին. «Կատարե՛ք Տիրոջ՝ մեր Աստծու Զատիկը, ինչպես որ գրված է այս ուխտի մատյանում» (Դ Թագ. 23:21): Սուրբ Գիրքը նշում է, որ Իսրայելը ղեկավարող դատավորների օրերից սկսած՝ Իսրայելի ու Հուդայի երկրի թագավորների օրոք նման Զատիկ չէր եղել:

Նոր ուխտում արդեն զատկական խորհուրդը ամբողջապես վերափոխվեց բովանդակորեն: Հովհաննեսի Ավետարանի 1-ին գլխում կարդում ենք, որ Հովհաննես Մկրտիչը, տեսնելով Հիսուսին, ազդարարում է. «Ահա Աստծու Գառը, Որ վերացնում է աշխարհի մեղքը: Սա է Նա, Որի մասին ասում էի, թե իմ հետևից է գալիս. Մարդ, Որը ինձնից մեծ եղավ, որովհետև ինձնից առաջ էլ կար» (Հովհ. 1:29–30): Հիսուս՝ որպես Աստծու Կենդանի Խոսք, գալիս է բացատրելու մարդկության ճշմարիտ խորհուրդը՝ որ է հոգևոր ազատությունը: Պատահական չէ, որ Աստված Օվսեե մարգարեի միջոցով հայտնել էր. «Եգիպտոսի՛ց եմ կանչելու Իմ Որդուն» (Օվսեե 11.1): Ամենևին պատահական չէր նաև, որ Հերովդես թագավորի հետապնդումների ժամանակ Տիրոջ հրեշտակը երազի մեջ երևաց Մարիամի նշանած Հովսեփին և պատվիրեց վերցնել Մանկանն ու Նրա մորը և հեռանալ Եգիպտոս: Աստված մեծ խորհուրդ էր սահմանել այս իրադարձություններում: Ինչպես Իսրայելը՝ որպես Աստծո առաջնեկ, գնաց Եգիպտոս, ապա դուրս եկավ այնտեղից՝ ի նշան ազատագրության, նույն կերպ և Հիսուս գնաց Եգիպտոս՝ կարծես անցնելով Իր ժողովրդի անցած ճանապարհի հետագծով, և վերադարձավ Հրեաստան՝ սակայն արդեն ազատագրելու: Ինչպես հրեաներն անապատում քառասուն տարի դեգերեցին, փորձությունների ու տանջանքների ենթարկվելով՝ հաղթահարեցին հոգևոր ստրկության կապանքները, նույնկերպ Հիսուս պետք է քառասուն օր փորձվեր անապատում՝ հաղթահարելու սատանայի փորձությունները:

Քրիստոս եկավ՝ հանգամանորեն բացատրելու հրեաներին և առհասարակ մարդկությանը, որ մարմնական կապանքներից վեր ավելի մեծ ստրկության տեսակ կա, որը մայրն է բոլոր տեսակի ստրկությունների: Այն հոգևոր ստրկությունն է: Հովհաննեսի Ավետարանի 8-րդ գլխում մի անչափ հետաքրքիր երկխոսություն է պահպանվել Հիսուսի և հրեաների միջև: Մի խումբ հրեաներ, տեսնելով Հիսուսի գործերն ու հրաշքները, հավատացին Նրան, իսկ Տերն ասաց նրանց. «Եթե դուք իմ ուսուցմանը հավատարիմ մնաք, իմ ճշմարիտ աշակերտները կլինեք: Եվ կճանաչեք ճշմարտությունը, ու այն կազատի ձեզ» (Հովհ. 8:31–32): Հրեաները հակադարձեցին Հիսուսին՝ հարցնելով. «Աբրահամի որդիներ ենք և երբեք ոչ ոքի չենք ծառայել. ինչպե՞ս ես ասում, թե ազատ կլինեք» (Հովհ. 8:33): Հիսուս, սակայն, պատասխանեց. «Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում ձեզ, թե ամեն ոք, որ մեղք է գործում, ծառա՛ է մեղքին» (Հովհ. 8:34): Այս փոքրիկ երկխոսությունը շատ կարևոր ուղերձներ է պարունակում՝ ճանաչողություն, ազատություն և ծառայականություն հասկացությունների հոգևոր բովանդակության վերաբերյալ: Հիսուս հրեաներին բացատրում է, որ թեպետ հարյուրավոր տարիներ առաջ Աստված ազատել է նրանց եգիպտական ստրկությունից, իսկ հետագայում նաև՝ ասորա-բաբելոնական տաժանակրությունից, այդուհանդերձ՝ որևէ մեկը և որևէ ազգ չեն կարող ճշմարտապես ազատագրված լինել, եթե չեն ճանաչում Ճշմարտությանը՝ Աստծուն, իր ճշմարիտ Ազատարարին: Այսինքն՝ ազատագրվածությունը ոչ թե ազգերից որևէ մեկին ընտրողաբար տրված շնորհ է, այլ ներքին, անձնական և ապա՝ ազգային-հավաքական ընտրության արդյունք: Ծառայել մեղքին նշանակում է ինքնակամ տրվել ստրկությանը, նշանակում է ազատությունը մերժել և սիրել շղթայվածությունը: Եվ վերջապես՝ ծառայել մեղքին, հոգևոր իմաստով, նշանակում է հետ շրջվել ու վերադառնալ ստրկության տուն՝ Եգիպտոս:

Միայն այս դիտանկյունից է բացատրելի Հիսուսի քարոզչությունը, միայն այս լույսի ներքո է Տիրոջ խաչելության սարսափելի իրադարձությունը պայծառություն ստանում: Բացարձակ այս համոզումով էր Հիսուսն անցնում ծովեզերքներով և գյուղերով, անապատով ու ժողովարաններով: Այս ճշմարտության հանդեպ անսակարկ հավատն էր, որ Խաչը բարձրացրեց աշխարհի Փրկչին, այսպես էր, որ Հիսուս բոլոր մեղքերի կողքին անմեղ մնաց: ➥ *էջ 8*

Աստված ունի Բ ծրագիր

Սկիզբը՝ թիվ 6

Նինվեի օրինակը. Բ ծրագրից վերադարձ դեպի Ա

Շատ հաճախ մարդիկ կարծում են, թե սայթաքումից հետո Բ ծրագիրը վերջնական է և անդառնալի, սակայն Հովնան մարգարեի պատմությունը ցույց է տալիս Աստծո ողորմության այլ կողմը: Աստված արդեն որոշել էր կործանել Նինվեն իր մեղքերի համար, որն էլ իրականանալու պարագայում կհամարվեր Ա ծրագրի՝ արդար դատաստանի գործադրում. «Եվ Աստված տեսավ նրանց գործերը, որ հետ դարձան իրենց չար ճանապարհներից. և Աստված զղջաց այն չարիքի համար, որ ասել էր, թե կանի նրանց, և չարեց» (Հովն. Գ 10): Եթե հայ ազգն այսօր զգում է, որ սայթաքել է և դարձել Բ ծրագիր կամ նույնիսկ կանգնած է կործանման եզրին, ապաշխարությունը կարող է շրջել պատմության ընթացքը: Նինվեն փրկվեց, որովհետև այնտեղ բոլորը ծոմ պահեցին ու զղջացին: Սա հույսի պատգամ է. աստվածային Բ ծրագիրը կարող է լինել ոչ թե մերժում, այլ դաստիարակչական հարված, որը պետք է մեզ հետ բերի մեր սկզբնական կոչմանը:

Սուրբ Գրքում կա մի հրաշալի դրվագ, երբ Իսրայելը լիովին մոռացել էր Աստծուն, տաճարը լքված էր, և Ա ծրագիրը մեռած էր թվում: Հոսիա թագավորը գտավ Օրենքի գիրքը և սարսափեց: Հոսիան չասաց՝ «Մենք արդեն ընտրյալ ենք, ինչ լինի՝ կլինի»: Նա պատռեց իր զգեստները և նորոգեց ուխտը. «Թագավորը կանգնեց սյան մոտ և Տիրոջ առաջ ուխտ դրեց.... որ հաստատի այդ Գրքում գրված ուխտի խոսքերը: Եվ ամբողջ ժողովուրդը հարեց ուխտին» (Դ Թագ. ԻԳ 3): Հայ ազգի համար Բ ծրագրից խուսափելու միակ ճանապարհը մեր «Օրենքի գիրքը» (մեր հոգևոր արմատները) նորից գտնելն է: Մենք չենք կարող մեր հույսը դնել միայն նախնիների հավատի վրա: Յուրաքանչյուր սերունդ պետք է իր սեփական ուխտը կնքի Աստծո հետ:

Չպետք է մոռանանք, որ մենք՝ յուրաքանչյուրս, Սուրբ Հիթենին չենք, այլ Նրա վրա պատվաստված ճյուղեր, և առավելաբար չպետք է հպարտանանք: Հրեաները սայթաքեցին հպարտությունից՝ կարծելով, թե իրենք անձեռնմխելի Ա ծրագիրն են: Եթե հայ ազգը նույն սխալը գործի՝ կարծելով, թե 301 թվականի դարձը մեզ ապահովագրել է հավիտյան, կկրկնի նույն ճակատագիրը: Աստված կարող է կտրել պատվաստված ճյուղը և նորից պատվաստել բնականին կամ ստեղծել մի նոր Բ ծրագիր:

Արարչություն և վերարարչություն. Ադամից մինչև Նոյ

Աստված ստեղծեց մարդուն՝ Իր պատկերով և նմանությամբ (Ա ծրագիր): Բայց երբ մարդկությունը հասավ բարոյական այլասերման այնպիսի կետի, որ «նրանց սրտի բոլոր խորհուրդները չար էին ամեն օր», Աստված գործի դրեց Բ ծրագիրը:

Ջրհեղեղը՝ որպես վերարարչություն

«Եվ Տերը տեսավ, որ մարդկանց չարությունը շատացել է երկրի վրա.... բայց Նոյը շնորհ գտավ Տիրոջ աչքում» (Ծննդ. Զ 5–8): Նոյը մարդկության երկրորդ Ադամն էր: Աստված չոչնչացրեց կյանքը, այլ այն վերստեղծեց մեկ արդարի միջոցով: Սա ցույց է տալիս, որ Աստված միշտ պահում է մի «սերմ», որից կարող է նորից ծլեցնել Իր կամքը, եթե հինն արդեն փտել է: Սա զգուշացնում է ցանկացած ազգի. եթե ողջ ազգը դառնում է անպիտան, Աստված կարող է պահել միայն «մեկ նավակ» (մի փոքր խումբ), որով կսկսվի նոր պատմություն:

Ռաքելի որդիները. Հովսեփի և Բենիամինի զուգահեռը

Ռաքելը՝ Հակոբի սիրելի կինը, ունեցավ երկու որդի: Հովսեփն Ա ծրագիրն էր, բայց Աստված տվեց նաև Բենիամինին. «Եվ երբ նրա հոգին դուրս էր գալիս (որովհետև նա մեռնում էր), նրա անունը դրեց Բենոնի (իմ ցավի որդին), բայց նրա հայրը նրան անվանեց Բենիամին (աջ ձեռքի որդի)» (Ծննդ. Լե 18): Երբ Հովսեփին եղբայրները վաճառեցին, Հակոբի ողջ սերը և Ռաքելի սերնդի շարունակականության հույսը կենտրոնացավ Բենիամինի վրա: Աստված կարծես կանխազգում էր Հովսեփի փորձությունը եգիպտոսում: Եթե Հովսեփը ձախողեր Պետափրեսի տանը կամ բանտում, Աստված ուներ Բենիամինին: Սա սովորեցնում է մեզ, որ Աստված երբեք «բոլոր ձվերը մեկ զամբյուղի մեջ չի դնում»: Նա միշտ ունի «աջ ձեռքի որդի», որը պատրաստ է ստանձնելու առաքելությունը:

Ունայնությունից դեպի հաստատուն հիմք. Աբել և Սեթ

Սա Բ ծրագրի ամենագեղեցիկ և իմաստուն դրսևորումներից է: Աստվածաշնչյան անունները երբեք պատահական չեն. դրանք մարգարեական ծածկագրեր են: Աբել անունը եբրայերեն նշանակում է «շունչ» կամ «ունայնություն»: Նա արդար էր, բայց նրա կյանքը կարճ էր, ինչպես մի շունչ: Նրա սպանությամբ, թվում էր, Աստծո ծրագիրը մարդկության համար այլևս կտրված է: Երբ Ադամն ու Եվան կորցրին Աբելին, Աստված նրանց պարգևեց Սեթին. «Եվ նրա անունը Սեթ դրեց՝ ասելով. «Աստված ինձ մի ուրիշ զավակ տվեց Աբելի փոխարեն»» (Ծննդ. Դ 25): Սեթ նշանակում է «հիմք», «հաստատված», «հենասյուն»: Աստված Բ ծրագրով ոչ միայն վերականգնեց կորուստը, այլև տվեց մի բան, որն ավելի հաստատուն էր: Եթե Աբելը զոհն էր, ապա Սեթը դարձավ այն հիմքը, որի վրա պիտի կառուցվեր մարդկության փրկության շղթան մինչև Քրիստոս: Երբեմն ազգի պատմության մեջ լինում են «Աբելյան» շրջաններ՝ զոհողությունների և կորուստների ժամանակներ, որոնք ունայնություն են թվում, բայց Աստված պատրաստում է «Սեթին»՝ այն հաստատուն հիմքը, որը պիտի գա կորուստներից հետո՝ ազգի գոյությունը հավերժացնելու համար:

Մովսես և Ահարոն. զուգահեռ առաջնորդության գաղտնիքը

Սա Բ ծրագրի մեկ այլ նախօրինակ է, որտեղ Աստված կանխավ պատրաստում է զուգահեռը՝ գիտակցելով մարդու տկարությունը կամ ըմբոստ բնավորությունը: Երբ Աստված կանչեց Մովսեսին, նա հինգ անգամ հրաժարվեց՝ տարբեր պատճառաբանություններ մեջ նշելով նաև իր ծանրախոսությունը. «Տիրոջ բարկությունը բորբոքվեց Մովսեսի վրա, և Նա ասաց. «Չէ՞ որ քո եղբայր ղևտացի Ահարոնը կա.... նա քեզ համար խոսող կլինի ժողովրդի առաջ»» (Ելք Դ 14–16): Աստված գիտեր Մովսեսի ըմբոստությունն ու թերությունները, և այստեղ Ահարոնն էր Աստծո Բ ծրագիրը, որը գործեց հենց սկզբից՝ Ա ծրագրի հետ միասին: Աստված միշտ ունի մեկին, ով կլրացնի մյուսին: Եթե Մովսեսը՝ որպես օրենսդիր, սայթաքեր, Ահարոնը՝ որպես քահանայապետ, պիտի պահեր հոգևոր կամուրջը: Մովսեսը ներկայացնում էր Աստծո օրենքը, իսկ Ահարոնը՝ Աստծո ողորմությունն ու միջնորդությունը: Սա ցույց է տալիս, որ Աստված մեկ ազգի կամ մեկ առաքելության մեջ միշտ դնում է երկու սյուն: Եթե մեկը տատանվում է, մյուսը պահում է հավասարակշռությունը:

Առաջնեկության կորուստը. Ռուբեն, Եսավ և մարդկային սայթաքում

Առաջնեկությունը Աստվածաշնչում սոսկ տարիքային առավելություն չէ, այն հոգևոր կարգավիճակ է (Ա ծրագիր): Ռուբենը, լինելով Հակոբի որդիներից անդրանիկը, պետք է լիներ տոհմի քահանան և թագավորը, բայց իր անկայունության պատճառով կորցրեց այն (Ծննդ. ԽԹ 3–4): Ինչպես արդեն նշեցինք, Աստված առաջնեկությունը բաժանեց Հովսեփի (ժառանգություն), Հուդայի (թագավորություն) և Ղևիի (քահանայություն) միջև: Եսավը Ա ծրագիրն էր, բայց նախընտրեց երկրայինը հոգևորից. «Ջգույշ եղեք.... որ մի գուցե լինի մի պոռնիկ կամ պիղծ մարդ, ինչպես Եսավը, որ մեկ կերակուրի համար իր անդրանիկությունը վաճառեց» (Եբր. ԺԲ 16): Մենք քրիստոնեության մեջ «անդրանիկն» ենք՝ որպես պետություն, որպես ազգ, բայց Ռուբենի և Եսավի օրինակները հուշում են, որ սխալ ընտրության պատճառով անդրանիկությունը կարելի է վաճառել կամ կորցնել մեկ վայրկյանում: Աստված այդժամ օրհնությունը տալիս է «կրտսերին» (նոր քրիստոնյա ազգերին):

Կանչի ներքին ընտրությունը. տապանն, թե խոսք

Աստվածաշնչյան պատմության ամենաառեղծվածային կետերից մեկը Նոյին ուղղված հրամանն է. «Քեզ համար մի տապան շինիր» (Ծննդ. 6 14): Մակերեսային ընկալմամբ՝ սա փրկության միակ ճանապարհն էր՝ նյութական մի կառույց, որը պիտի դիմակայեր ջրհեղեղին, սակայն եբրայերեն բնագիրն իր մեջ թաքցնում է մի հետաքրքրական մոտեցում, որը բացահայտում է Աստծո Ա ծրագրի իրական էությունը: Եբրայերեն «տեյվա» (Teivah) բառը, որը թարգմանվում է որպես տապան, ունի նաև հիմնարար մեկ այլ նշանակություն՝ խոսք (կամ բառ): Սա պարզ պատահականություն չէ, այլ աստվածային առաջարկի երկու տարբերակ.

- Բ տարբերակ (տապան): Կառուցել ֆիզիկական պատնեշ՝ փայտից ու կուպրից, որն աղետից կփրկի միայն ընտանիքին ու կենդանիներին: Սա փրկություն է «ներսում»՝ մեկուսացած աշխարհից:
- Ա տարբերակ (խոսք): Կառուցել հոգևոր «տապան»՝ այսինքն՝ խոսք, քարոզ, հանրային ապաշխարության կանչ: Եթե Նոյը տապանի փոխարեն ընտրեր խոսքի կառուցումը և «կառուցեր» խոսքն այնքան զորեղ, որ այն դառնար ազգերի դարձի հիմքը, ապա ջրհեղեղի կարիքը գուցե ընդհանրապես չլիներ:

Աստված Նոյին տվեց 120 տարի ժամանակ: Այդ 120 տարին տապանը կառուցելու համար չէր, այլ՝ խոսքը: Նոյը կոչվում է «արդարության քարոզիչ» (Բ Պետ. Բ 5): Եթե Նոյի քարոզը (խոսքը) հասներ մարդկանց սրտերին, և նրանք զղջային, ինչպես դա արեցին Նինվեի բնակիչները դարեր անց, ապա Աստծո Բ ծրագիրը՝ ջրհեղեղը, կփոխարինվեր ողորմության նորոգված Ա ծրագրով: Հոգևոր իմաստով՝ Աստված Նոյին ասում էր. «Մտի՛ր խոսքի մեջ»: Սա նշանակում է, որ ցանկացած փորձության ժամանակ մեր միակ անառիկ պատվարը, ապավենը Աստծո խոսքն է: Եթե մենք կառուցում ենք մեր կյանքն աստվածային խոսքի վրա, մենք այլևս կարիք չունենք վախենալու արտաքին ջրհեղեղներից:

Մենք էլ այսօր անմասն չենք Նոյին տրված ընտրությունից: Եթե ընտրենք խոսքի կառուցումը, ապա այն աղետները, որոնք անխուսափելի են թվում (ինչպես ջրհեղեղը), կարող են չեղարկվել Աստծո ողորմությամբ: Աստված կանչի մեջ մեզ միշտ տալիս է ընտրություն՝ կառուցել փրկությա՛ն գործիքը, թե՛ վերացնել կործանման պատճառը: Աստված երբեք չի ցանկանում կործանում: Նոյի պատմությունն այս իմաստով ոչ թե ջրհեղեղի մասին է, այլ չլսված խոսքի: Տապանը կառուցվեց միայն այն պատճառով, որ խոսքը չընդունվեց: Ուստի՝ Բ ծրագիրը (տապանը) անհրաժեշտություն է դառնում միայն այնտեղ, որտեղ Ա ծրագիրը (խոսքը և դարձը) տապալվում է:

Մեծագույն Բ ծրագիրը. Առաջին և Երկրորդ գալուստ

Ա և Բ ծրագրերի մասին համեստ մտորումներիս գագաթնակետն է Առաջին և Երկրորդ գալուստների համեմատական լույսի ներքո ստացած եզրակացությունը: Եթե Քրիստոսի Առաջին գալուստը համարենք մարդկության փրկության Ա ծրագիր՝ հաշտության և սիրո միջոցով, ապա պետք է նաև փաստել, որ աշխարհը չընդունեց Նրան այնպես, ինչպես հարկն էր: Քրիստոս եկավ որպես Գառ՝ մեղքերը վերցնելու համար, բայց կգա որպես Առյուծ՝ դատելու համար. «Այս Հիսուսը, որ ձեզնից երկինք վերացավ, այնպես պիտի գա, ինչպես տեսաք Նրան երկինք գնալիս» (Գործք Ա 11): Երկրորդ գալուստը Աստծո վերջնական Բ ծրագիրն է: Եթե առաջին անգամ մարդկությանը հնարավորություն տրվեց՝ փրկվելու շնորհով և քարոզչությամբ, ապա երկրորդ անգամ Աստված Ինքը ուժով և արդարությամբ կհաստատի Իր թագավորությունը: Սա ցույց է տալիս, որ Աստծո ծրագիրը երբեք չի ձախողվում. եթե մարդը չի գալիս սիրով, Աստված գալիս է արդարությամբ: Եթե մենք ընդունում ենք, որ Աստված միշտ ունի «երկրորդ տարբերակ», ապա պետք է հարցնենք ինքներս մեզ՝ մենք դեռ Աստծո Ա ծրագի՞րն ենք այս տարածաշրջանում, թե՞ արդեն դարձել ենք Բ տարբերակ, որը նույնպես կարող է փոխարինվել. «Հիշի՛ր, թե որտեղից ընկար, և ապաշխարի՛ր.... ապա թե ոչ՝ շուտով կգամ քեզ մոտ և քո աշտանակը իր տեղից կշարժեմ» (Հայտ. Բ 5): Հայ ազգի աշտանակը (քրիստոնեական առաքելությունը) կարող է տեղաշարժվել: Աստված միշտ ունի մեկ ուրիշին: Մենք պետք է լինենք ոչ թե «կորսված Հովսեփ», այլ «գտնված Հովսեփ», որը փրկում է իր եղբայրներին: Սա իմ համեստ մտորումների առանցքային և հոգևոր բարձրակետն է: Եթե մինչ այս մենք վերլուծում էինք պատմությունն ու աստվածաշնչյան օրինակները, ապա այս հատվածը «գործնական ուղեցույց» է այն մասին, թե ինչպես կարող է ազգը վերականգնել իր կորցրած Ա ծրագիրը:

Դանիել մարգարեի բանաձևը. ինչպե՞ս վերադառնալ Ա ծրագրին

Աստվածաշնչում Դանիել մարգարեն գտնվում էր Բաբելոնում՝ գերության մեջ: Իսրայելը սայթաքել էր, տաճարը քանդված էր, և թվում էր՝ Բ ծրագիրը (պատիժը և գերությունը) վերջնական է: Սակայն Դանիել մարգարեն գտավ այն բանալին, որը շրջեց Աստծո բարկությունը: Եվ այդ բանալին հավաքական կերպով մեղքի ընդունումն ու խոստովանումն էր. «Մենք մեղանչեցինք, անօրինություն արեցինք, ամբարշտացանք և ապստամբեցինք.... Մեզ վրա է դեմքի ամոթը, մեր թագավորների, մեր իշխանների և մեր հայրերի վրա» (Դան. Թ 5, 8): Դանիելը չասաց՝ «Ես արդար եմ, նրանք են մեղավոր»: Նա իրեն նույնացրեց իր ազգի հետ: Հայ ազգի համար Բ ծրագրից դեպի Ա ծրագիր վերադարձն սկսվում է ոչ թե քաղաքականությունից, այլ հոգևոր խոստովանությունից: Երբ ազգը դադարում է մեղադրել ուրիշներին և տեսնում է սեփական հեռացումն Աստծուց, աստվածային ծրագիրն սկսում է նորոգվել, սկսում է ոչ թե արդարություն, այլ ողորմություն հայցել. «Որովհետև մենք մեր աղաչանքները Քո առաջ ենք մատուցում ոչ թե մեր արդարության համար, այլ Քո մեծ ողորմության համար» (Դան. Թ 18): Սա այն կետն է, որտեղ հպարտությունը մեռնում է: Մենք չպետք է Աստծուն ասենք՝ «Մենք առաջին քրիստոնյան ենք, Դու պարտավոր ես մեզ փրկել»: Մենք պետք է ասենք՝ «Տե՛ր, մենք սայթաքել ենք, բայց Քո ողորմությունը մեծ է»:

Բ ծրագիրը՝ որպես Աստծո վերջին սիրո կանչ

Աստվածաշնչյան ողջ պատմությունն ապացուցում է մեկ ճշմարտություն. Աստված երբեք չի պարտվում: Եթե մարդը ձախողում է Ա ծրագիրը, Աստված ստեղծում է Բ ծրագիրը՝ ոչ թե մարդուն պատժելու, այլ Իր ծրագիրը փրկելու համար: Այսպիսով՝ ընտրյալ լինելը շարժուն, փոփոխական վիճակ է: Մենք տեսանք, որ.

- Ադամին փոխարինեց Նոյը:
- Աբելին փոխարինեց Սեթը:
- Եսավին փոխարինեց Հակոբը:
- Ռուբենին փոխարինեցին Հովսեփը, Հուդան և Ղևին:
- Իսրայելին (որպես միակ ընտրյալի) փոխարինեցին բոլոր ազգերը, որոնց մեջ հայերը դարձան առաջնեկ:

Սա նշանակում է, որ Աստված ունի «հավերժական պահեստազոր»: Եթե մենք՝ հայերս, հպարտանանք մեր անցյալով, բայց մոռանանք մեր ներկան, Աստված կարող է մեր աշտանակը տալ մեկ ուրիշին: Աստված ունի Բ ծրագիր, բայց Նրա սիրտը միշտ բաբախում է Ա ծրագրի համար: Մեր ազգի պատմությունը մեծ վկայություն է այն մասին, թե ինչպես է Աստված մեզ պահել որպես Իր «աջ ձեռքի որդի», բայց մենք հաճախ կանգնում ենք խաչմերուկում: Արդ՝

1. Մի՛ վաճառիր անդրանիկությունդ. Եսավի պես մի՛ փոխիր քո հոգևոր ժառանգությունը ժամանակավոր, նյութական «ոսպապուրի» հետ:
2. Մի՛ թաղիր տաղանդդ. Աստված քեզ հնարավորություն է տվել՝ լինելու քրիստոնեական պատվար. եթե դու լռես, քարերը կաղաղակեն:
3. Դարձի՛ր «մնացորդի» մաս. Եղիայի յոթ հազարի պես եղի՛ր այն մեկը, ով չի ծնկում ժամանակակից կուռքերի առաջ:

Աստծո Բ ծրագիրը մարդկության պատմության մեջ ամենամեծ ապահովագրությունն է: Այն մեզ հիշեցնում է, որ մեր սխալները չեն կարող կանգնեցնել Արարչին: Բայց մեր մեծագույն երջանկությունը կլինի այն, որ մենք լինենք Նրա սկզբնական կամքի կատարողը՝ իրագործելով այն առաքելությունը, որի համար Աստված մեզ ընտրել էր դեռևս Արարատի ստորոտին: Այսպիսով՝ Աստված ունի Բ ծրագիր, և այս գաղափարը ոչ թե հուսահատության, այլ բացարձակ հույսի մասին է:

Հովհաննես սրկ. ԷՎԻՆՅԱՆ
Դիանա ՔՈՉԱՐՅԱՆ

Իսահակ վրդ. Պողոսյան. «Հայոց ինքնության արեգակը»

(վիպակ Սուրբ Մեսրոպ Մաշտոցի մասին)

Նահապետի ծնունդը

«Ընդ առաւօտս կանխեցից՝ յանդիման լինել քեզ, թագաւոր իմ և աստուած իմ»
(Շարակնոց):

Տարոնի լեռներում առավոտները բացվում էին սառն ու խաղաղ, ինչպես ծերունին է դողդոջուն ձեռքերով անաղմուկ արձակում գզգզված արխալուղի ծալքերը՝ ներս թողնելով լռությունը: Տարոնի լեռները, որոնք դարեր շարունակ պահել էին զանազան տոհմերի գաղտնի խորհուրդները, հազվադեպ էին այդքան լուռ լինում: Սովորաբար նրանց կրծքից գլորվող սուր քամիները մորմոքելով խոնարհեցնում էին խոտածածկ թեքությունները՝ խեղդելով ու խլացնելով բազմազան ու տարբեր կանաչների մեղմ սոսափյունը: Բայց լեռներն այդ առավոտ անսովոր խաղաղ էին: Սառնությունն արդեն նահանջել էր, ու միջանցիկ քամին թեթև շաչյունով բարձրացնում էր օթևանների ու ապարանքների տանիքները՝ յուրովսանն ավետելով սպասվող նոր կյանքի լուսաբացը:

Երբ խոնավ լուսածագի մշուշե թանձր վարագույրը քաշվեց, ծնվեց մի մանուկ, որը հետագայում պիտի դառնար իր ազգի մտքի ու հոգու մութ անկյունները լուսավառող ճրագը: Նրա մասին հետագայում իր աշակերտներից Կորյունը գրելու էր. «Նա ծնվեց ազնվականների տոհմից և կյանքով ու խոհով առանձնացավ մանկուց»:

Մանկան ծնունդը նման չէր հանկարծադեպ պատահականության. երբ աչքերը բացեց, Տարոնի սառը օդը, թվաց, ջերմացավ, հետայնու եթերի մեջ կարծես ուրվագծվեց հայոց մեծերից մեկի խաղաղ ու փայլող կերպարանքը:

Տան ներսում դեռ զգացվում էր գիշերվա ծանրությունը, սակայն մոր խոնջանքն ու դեմքի դալկությունն անցան հենց նույն պահին, երբ տեսավ մանկանը: Նախ հպվեց երեխայի դեմքին, ապա պարուրեց նրան, հետայնու մոտեցնելով սրտին ու ժպիտը թաքցնելով գլխաշորի եզրերին՝ շշնջաց.

— Լեռների սեր ես դու… Լեռների լռություն կա քեզանում:

Թվաց, թե ի պատասխան՝ լեռներն իրենց հատուկ վեհությամբ մեկ անգամ էլ ողջունեցին նոր կյանքի լույս աշխարհ գալը:

Տարոնում միշտ ասել են՝ լեռները մարդկանց բնավորություն են հաղորդում. կամ դարձնում են լռակյաց, համբերատար՝ իրենց նման ամրապինդ, կամ՝ գարնան հորդ գետերի նման՝ անհամբեր, քաջաշունչ ու խիզախ: Բայց մանուկը, որին Մեսրոպ պիտի կոչեին, ապա՝ «երանելի և աստուածասէր, սուրբ վարդապետ», «Լուսաւորիչ ազգի հայոց» ու «Մաշտոց», կարծես միահյուսել էր լեռների լռությունն ու վարար գետերի ուժը: Նորածիններին բնորոշ նրա լացն էլ լռության երանգ ուներ, կարճ ու վաղանցիկ՝ խինդով համախառն, ասես հրաժարվում էր աշխարհի հետ բաժանել իր հոգու խռովքը: Բայց աչքերը… Աչքերը խոսուն էին, ինչպես խոխոջուն առվակներ՝ բաց, անեզր, հանգույն գիշերվա աստղառատ երկնքին՝ խորն ու խոստումնաշատ: Այդ աչքերը տակավին շատ բան պիտի տեսնեին՝ զմայլվելու և այլայլվելու աստիճան: Բայց հիմա դրանք նայում էին պարզ ու շիտակ, անմեղ՝ որպես գարնան առաջին ցողը, որ հանդարտ հոսում ու գլորվում է քար ու ժայռի վրայով:

Հայրը՝ լեռներում ծնված մի մարդ, կանգնել էր անկողնու մոտ՝ ծանր շնչելով: Նրա աչքերը՝ սովորաբար խոր ու մռայլ, հիմա մեղմացել էին՝ սևեռուն գամվելով փոքրիկից ոչ այնքան հեռու դրված դեղնաշուք Ավետարանի վրա: Լեռներից ժառանգված նրա քարե սառնասրտությունը հիմա կարծես հալվել, անէացել էր, ինչպես ձյունը՝ գարնան արևի առաջին ճառագայթից:

Երբ ձեռքերի մեջ առավ մանկանը, վայրկյանի ներգործությամբ նրա մեջ առաջ եկավ մի այնպիսի զգացողություն, որ չէր հանդգնի խոստովանել ոչ մի դեպքում: Այդ մասին հետո՝ տասնյակ տարիներ անց, գրելու էր Հայոց տան մեծ պատմահայրը. «Նա մանուկ հասակից պիտի գնար ուսման ճանապարհով, և նախախնամությունը նրան առաջնորդելու էր դեպի խոսքի ու գրի խորախորհուրդ գաղտնիքները»:

Տունը, որտեղ վաղուց ի վեր ապրում էին ամուսինները, իսկ դրանից էլ առաջ՝ նրանց բարեպաշտ ու արդար նախածնողները, այդ առավոտ շատ ավելի ապահով ու լուսավոր էր դարձել: Պատերի աննշան բացվածքներից ու լուսանցքներից ներս սահող օդը զով էր, բայց ոչ սառը: Այն փոքրիկ, թույլ ալիքներով փարվում էր ճկուն հատակին, դանդաղ բարձրանում փայտե սյուների երկայնքով՝ մերթընդմերթ շարժելով ամփոփ վարագույրների ծայրերը, ու կորանում ծիածանաձև կամարների տակ՝ իր հետ բերելով վաղուց մոռացված արշալույսների ու անցյալ դարերի շնչառությունը:

Արևի զգայուն, խորաթափանց շողերն ընկնում էին մոր վարսերին, որոնք թաքնվել էին բեհեզին նմանող սպիտակ գլխաշորի տակ. աչքերում գոհություն էր:

— Տես,— ասաց նա կամացուկ,— արդեն երևում է, որ քչախոս ես, բայց աչքերդ շատ բան են ու շողշողում: Նրանց մեջ մի ամբողջ աշխարհ է պարփակված՝ լի անհատնում պատմություններով:

Այդ պահին այնպես թվաց, թե լեռները դարձյալ խոսեցին՝ փոխանցելով. «Լավ պահպանեցեք այս մանկանը, քանի որ նախախնամությունը նրա ճակատագիրը լեռներից էլ ավելի վեր է բարձրացնելու»:

Շարունակելի

Հայրենի հողի և հայոց պատմության խորհրդաբանությունը Վ. Պետրոսյանի «Հայկական էսքիզներում»

20-րդ դարի երկրորդ կեսի հայ արձակում որպես բացառիկ անհատականություն հատկանշվում է Վարդգես Պետրոսյանը: Տաղանդավոր արձակագիրն ու հրապարակախոսը, 1960-ական թվականներից սկսած, ունեցավ բուռն ու բերքառատ ստեղծագործական գործունեության տարիներ, ընդ որում՝ ոչ միայն գրական, այլև հասարակական-քաղաքական՝ Հայաստանի գրողների միության նախագահ, Հայկական ԽՍՀ և ԽՍՀՄ գերագույն խորհուրդների պատգամավոր, Մշակույթի հայկական ֆոնդի նախագահ, «Գարուն» հանդեսի գլխավոր խմբագիր և այլն:

Վարդգես Պետրոսյանը ժողովրդական գրող էր: Երկար ժամանակ վարելով բարձր պաշտոններ՝ նա, այնուամենայնիվ, երբեք չկտրվեց ժողովրդից, չպարփակվեց առանձնասենյակային լռության մեջ: Ավելին՝ մշտապես առիթներ էր որոնում և հնարավորություններ ստեղծում՝ ժողովրդական լայն խավերի հետ շփվելու, Հայաստանի, Արցախի և Սփյուռքի հայության հետ մշտապես հարաբերվելու համար:

Վ. Պետրոսյանի ստեղծագործություններից ամենատարածվածն ու սիրվածը, թերևս, «Հայկական էսքիզներ» էսսե-խոհագրությունն է, որն ունեցել է մի քանի հրատարակություն (առանձին և ժողովածուների մեջ), թարգմանվել օտար լեզուներով:

«Հայկական էսքիզները» ամբողջովին նվիրված է Հայաստան աշխարհին, բնորոշվում է հայոց պատմության հարյուրամյակների և գրողի ապրած դարաշրջանի հուզախռով, դրամատիկ ելևէջումներով, իրականի և երևակայականի համադրությունից ծնված անսովոր ազնիվ, գեղեցիկ ու համարձակ խոհերով, հարցերով ու հարցականներով: Գրողը մաքուր խղճով և արդար բարոյականությամբ կանգնում է իր ժողովրդի պատմության ու ներկայի առջև՝ նորից և վերստին քրքրելով էջերը, անցյալն ու ներկան միահյուսելով: Հայրենի հողի, հայոց երկրի, նրա հազարամյա կենսագրության շնչառությունն այնպես նրբորեն է զգում գրողը, երբ կերտում է Հայաստան երկրի մշտահիմ ու հավերժական կերպարը:

Խոհագրության սկիզբը շատ խորհրդանշական է. քարերի երկիր Հայաստանի առասպելի ներկայացմամբ ու մեկնությամբ Վ. Պետրոսյանն ասում է հետևյալը. «Փոքր տղա լինեի, դեռ հավատայի հեքիաթներին, պարզ-պարզ կպատկերացնեի նույնիսկ այն չար, զարհուրելի կախարդին, որ անհիշելի ժամանակներում անցավ մեր աշխարհով: Անցավ, տեսավ ու նախանձեց: Նախանձեց ու կախարդական գավազանը բարձրացնելով՝ ծղրտաց.

— Քարացեք:

Ու քարացան զմրուխտ բլուրները, դաշտերում սվսվացող միլիոնավոր ծաղիկներն անգույն քարակտորների փոխվեցին, թափվեցին հողին, անշարժացան անտառները, հողը կծղեց ու կարծրացավ, նույնիսկ մեր աշխարհի գլխին ամպերը ծանրացան ու քարե անձրև տեղաց: ….Ու ծնվեց իմ ժողովուրդն այստեղ ապրելու» (Վ. Պետրոսյան, «Ապրած և չապրած տարիներ» գիրք, «Հայկական էսքիզներ», Ե., 1970, էջ 231):

Եվ այդ ժողովուրդը Տիրոջից ուրիշ հրաշք-գավազան չստացավ և գավազան չունեցավ՝ քարե կախարդանքը քանդելու համար: Նա իր ժրաջան ձեռքերով, մտքով և համբերությամբ սկսեց թիզ առ թիզ քանդել կախարդանքի կծիկը, վերադարձնել հողին իր քնքշությունը, ծաղիկներին՝ գույները, անտառներին՝ խշշոցը: Ահա այսպիսի փոխաբերական պատկերներով ու համեմատություններով են բացվում «Հայկական էսքիզների» առաջին էջերը, որոնք իր ժամանակին նորությամբ և թարմությամբ էին փայլում:

«Հայկական էսքիզները» մեծ կտավի գործ է: Գրողը որևէ սահմանափակում, արգելանք չի տեսնում և հանդուրժում՝ իր ասելիքը բարձրաձայնելու համար: Դա հոգեկան՝ ներսից ու ներքուստ տրված ազատությունն էր, որով լիուլի օժտված էր գրողը, և հոգեկան այդ սքանչելի հատկությամբ տարբերվում, առանձնանում էր շատերից:

«Հայկական էսքիզների» գլխավոր հերոսը հայ մարդն է, Հայաստան երկիրը, աշխարհասփյուռ հայ ժողովուրդը, իսկ գործողության վայրը՝ ողջ մոլորակը, որտեղ հայ հոգի կա, հայ սիրտ ու միտք կան:

Ո՞րն ես դու, Հայաստան. այս հարցն է հաճախ հնչում գրքում: Գրողն ամենուր որոնել է իր երկրի կերպարն ու նրա հավերժության խորհուրդը. «Ես քեզ որոնեցի այսօրվա Հայաստանի թրթռուն, երիտասարդ մարմնի մեջ ու գունաթափ քարտեզներում, որով գրգռեցին մեր պապերի դյուրավառ հոգին, որով խաբեցին մեզ բոլորը: Ես քեզ որոնեցի ամենայն հայոց կաթողիկոսների աղոթքներում առ աստված և ամեն հայի հայհոյանքի մեջ, որտեղ մենք ամենքս զարմանալի բանաստեղծ ենք: ….Որոնեցի իմ աղջկա դպրոցական առաջին տետրերի մեջ և Մատենադարանի մագաղաթներում: Որոնեցի հայ մարդկանց տաք վեճերի մեջ, երբ միանգամից քսան ծրագիր է մեջտեղ բերվում, թե ինչպես էր հնարավոր փրկել Հայաստանը՝ հինգերորդ, տասներորդ, տասնյոթերորդ դարերում, 1915, 16, 17, 18 թվականներին» (էջ 327):

Պատմության քառուղիներում և անցած դարերի մեջ գրողը միշտ որոնել է իր երկրի կերպարը, նաև այդ նպատակով ոտքով շրջել հայոց պատմության հնամենի ու նվիրական հետքերով՝ Կարսից մինչև Տրոյայի ավերակները: Զարմանալի, շատ զարմանալի բան է, երբ մարդ իր հայրենիքից գնում է դեպի… պատմական հայրենիք, որն այլևս ուրիշներինն է. «Սա Կարսն է, երևի շատ մոտիկ Կարսի բերդն է, Առաքելոց եկեղեցին, նշանավոր կամուրջը…. Սա Կարսն է, ընդամենը 50 տարի առաջ մարդիկ Ալեքսանդրապոլից ֆայտոնով եկել են այստեղ քյուֆթա ուտելու և թութուն տանելու» (էջ 334): Գրողի պատմական զգացողությունն այդ պահին ծանրանում է մեծապես. «Հանկարծ ուզում եմ ճչալ, ուզում եմ աշխարհի բոլոր բարձրախոսների ձայներով գոռալ այդ մարդկանց ականջներում. դուք, որ հանգիստ թեյ եք խմում կամ ծխում էժանագին նարգիլե, գիտե՞ք, որ այս տան տերերին սպանել են, գիտե՞ք, որ ծալապատիկ նստած եք ուրիշի արյունով թաց, ուրիշի հողի վրա» (էջ 335):

Գրողն իր ուղևորության ընթացքում բազմիցս ականատես է եղել, թե ինչպես են թուրքական իշխանություններն իրենց պետության ներսում կեղծում, նենգափոխում և այլասերում պատմության էջերը՝ հարմարեցնելով դրանք իրենց պետական շահերին ու նպատակներին: Դեռևս 1965 թվականին նա գրում է. «Մենք դուրս ենք գալիս դահլիճից, թանգարանից և բարձունքին կանգնած երկար նայում Բոսֆորի ջրերին: Կգա՞ արդյոք Թուրքիայի այն սերունդը, որը կկարդա իր երկրի պատմության արյունոտ էջերը, կասի՞ արդյոք իր դաժան խոսքը: Չգիտեմ: (Մարդկային պատմության գրքում այնքան էջեր կան չկարդացած, մի՞թե միայն մերն է.…)» (էջ 350):

Եթե 1960-ական թվականների կեսերին թուրքական հասարակության մեջ այդպես խորհող, հավանաբար, որևէ մեկը չկար, ապա այսօր այդպես մտածող թուրքեր կան:

«Հայկական էսքիզները» հայրենասիրական բորբոքուն լիցքերով մի ուղերձ է, կտա՛կ, պատգա՛մ և հորդորա՛կ՝ ուղղված յուրաքանչյուր հայի և երկրագնդի ողջ հայությանը: Վ. Պետրոսյանը մշտապես թեժացնում, բորբոքում է մեր ժողովրդի պատմական հիշողությունը, անարգադի սյունին գամում դավաճան հայերին. «Չեմ ուզում նորից տառապել նրա համար, որ մեր ժողովրդի պատմության բոլոր կարևոր հատվածները լիքն են դավաճաններով: Եթե Վարդան՝ նրա կողքին Վասակ կա, Սամվել է՝ Մերուժան Արծրունի, Գագիկ թագավոր է՝ Վեստ-Սարգիս, Մխիթար սպարապետ է՝ Միհրան հարյուրապետ, և այսպես անվերջ; Քանի-քանի սերունդ հաշտվել է այս բանի հետ և արդարացման խոսք չի գտել, երբ օտարներն էլ ակնարկել են այդ մասին» (էջ 364): Գրողը տարակուսում է, որ այդ դավաճաններին գուցե մեր պատմիչներն են հնարել, քանի որ, եթե նրանք չլինեին, ինչպես պետք է բացատրվեին հայոց երկրի բազում սայթաքումներն ու ողբերգությունները:

«Հայկական էսքիզները» մեծ չափանիշներով ու մասշտաբներով գործ է: Այն այսօր նույնքան արդիական է, որքան իր ստեղծման օրերին՝ 20-րդ դարի 60-ական թվականներին: Թարգմանվելով օտար լեզուներով՝ այն նաև օտարազգի ընթերցողներին է լավագույնս ներկայացնում Հայաստանը, նրա պատմության լուսավոր ու ողբերգական էջերը, հայոց պատմության խորախորհուրդ դասերը: «Հայկական էսքիզներով», ինչպես նաև իր այլ ստեղծագործություններով, Վարդգես Պետրոսյանը շարունակում է իր հոգեկան ու բարոյական հզոր ներգործությունը հայ սերունդների մտքի, հոգու և գեղագիտական ճաշակի վրա:

Արմեն ԿԱՐԱՊԵՏՅԱՆ, պ. գ. թ.

Ապաշխարության ճանապարհը

↩ էջ 4

Իսկ թե ինչո՞ւ է Աստված կանչի հենց այս կերպն ընտրել, հարց է, որի պատասխանը նախ՝ արդեն ասվեց, և ապա՝ պետք է հիշենք առաքյալի մխիթարական խոսքերը. «.... քանի որ Տէրը, ում սիրում է, խրատում է, պատժում է ամէն մի որդու, որին ընդունում է» (Եբր. 12:6, Առակ. 3:12): Երրորդ՝ բոլոր պատուհասները Տերն է թույլ տալիս՝ որպես միակ ներգործուն, առավել մեծ պատուհասներից ազատարար միջոց՝ փրկելու համար կեսհավատացյալ լինելուց, հավաքական անբարոյություններից, որոնց պատճառով խամրում և իսպառ ոչնչանում է ազգի հոգին: Փոքր պատուհասով Աստված կանխում է գալիք առավել մեծ չարիքը:

Ե. Ակամա ապաշխարության լուծը

Թվում է, թե արյամբ վկայությունն ավելի դյուրին կլիներ, քան ձգձգվող նեղություններով, անընդհատ հալածանքներով տառապանքներ ապրելը: Բայց սա մեզ համար առայժմ անարյուն նահատակության ճանապարհ է, եթե հասկացող ենք, զղջացող սիրտ ունենք, ուշադիր ենք և հետևում ենք Աստծո և մեր Մայր Եկեղեցու կոչերին: Որքան մխիթարական են նաև հայրերի խոսքերն այն մասին, թե վերջին ժամանակների քրիստոնյաներն անկարող են հանուն Քրիստոսի առաքինության մեծ սխրանքներ գործել, և այդ սխրանքներին փոխարինելու են հոգու փրկության համար նեղություններն ու տառապանքները:

Աստծո՝ մեզ վրա դրած այս ստիպողաբար ու ակամա ապաշխարության անձկությունները մենք ենք վաստակել, քանի որ երբ Ավետարանը նեղությունները կամովին հանձն առնելու և խաչը կամավոր կրելու կոչ է անում, շատ քչերս ենք լսողները, և շատ ավելի քչերս ենք կատարողները: Սակայն ահա Աստված մեր հոգիների փրկության համար Իր զինանոցում պահված մեկ այլ հնարք, մեկ այլ միջոց է գործի կոչել, և տառապանքների կրակի միջով այժմ հրավիրում է մեզ՝ մեղքից մեր սրտերը մաքրելու և հավիտենության շեղված ճանապարհից վերադառնալու ուղիղ, բայց անձուկ շավիղներ:

Մեզանից յուրաքանչյուրի սրտից պետք է այսօրինակ աղոթքներ բխեն. «Տէր Աստված իմ, օգնիր իմ անհավատությանը, որպեսզի հավատքով քայլեմ այս կենցաղի ալեկոծ ծովի վրայով, և Դու իմ ձեռքից բռնած՝ անցկացրու մեր նեղությունների այս ջրերով և տուր համբերություն ու տոկունություն, որպեսզի հասնեմ Քո խոստացած Ավետյաց Երկիրը՝ Քեզ հետ հավիտենապես լինելու Արքայությանդ մեջ»:

Հետևաբար՝ այս նեղություններով Աստված շեղում է մեզ մեր մեղսահակ ընթացքից, որովհետև գուցե, ինչպես ասվեց, այլ տարբերակ չկա, գուցե բոլոր միջոցներն արդեն իսկ սպառված են: Եվ ահա այս նեղությունների ու կարոտությունների միջոցով Աստված փորձում է մեզ շեղել մեր գծուծ հպարտության, անձնապաշտության, գոռոզամտության, անլսողության, անհնազանդության, նյութապաշտության, ինքնահիրապուրանքի ընթացքից՝ նեղացնելով մեր ընտրության տիրույթը, դուրս բերելով մեզ մեր ես-ի կաղապարից և հանգեցնելով մեր հավանությանը կյանքի ինքնազոհողության սկզբունքին, նաև հեռացնելով ու պոկելով մեզ կրքի ու հաճության դժոխային կախվածությունից և առաջնորդելով ոչ թե տեսական, այլ գործնական աստվածապաշտության:

Այսպիսով՝ մեր միտքը, սիրտը, մեր ողջ էությունը կենտրոնացվում են ապաշխարության խորհրդի և հետևաբար՝ ամենակարևորի՝ սրտի մաքրության վրա: Եվ դա արվում է այս երկրային կարճ ժամանակահատվածում մեր հոգիները զղջման ավազանով նախապես մաքրելու և հավիտենությանը պատրաստելու համար:

Զ. Անփույթ հարուստն ու մենակյացը

Մի սթափեցնող պատմություն կա: Անապատում մի ծեր մենակյաց էր ապրում: Աշխարհականներից մեկը ժամանակ առ ժամանակ այս ծերունուն հաց էր բերում և մի օր քաղաքից մենաստան գնալու ճանապարհին թաղման թափոր է տեսնում: Մեծ ու հանդիսավոր ծոխությամբ ու վայելչությամբ՝ եպիսկոպոսները, դպրաց դասերի ուղեկցությամբ, սրտառուչ աղոթքներ էին վերառաքում: Ինչպիսի՜ ողորմյաներ էին բխում մարդկանց սրտերից ննջեցյալի հոգու ողորմության և փրկության համար: Ննջեցյալը մեծահարուստ էր, որ, հավանաբար, եկեղեցու համար մեծ նվիրատվություններ և ընծայաբերություններ էր արել:

Բայց այս աշխարհականը գիտեր այդ մահացած մեծահարուստին, գիտեր նաև իր հոգու փրկության հանդեպ նրա անփութությունն ու ծուլությունը և զարմացած էր տեսածի և իմացածի հակասություններից: Այս տեսարանից հետո անապատ գալով՝ վկա է դառնում մեկ այլ սահմռկեցուցիչ իրողության. տեսնում է գազաններից հոշոտված մենակյացի մարմինը: Այս անգամ սարսափում է այս երկու՝ մեծահարուստի և մենակյացի կյանքի ու մահվան՝ իրար հակասող վկայությունների փաստից: Ծնկի գալով՝ նա աղաչում է Աստծուն՝ ինչպե՞ս սա հասկանալ: Մի կողմից՝ անփույթ հարուստի պարագայում, այդպիսի ծոխ թաղում, և մյուս կողմից՝ այս աստվածահաճո կյանքով ապրող ճգնավորի դեպքում, որ ամեն օր իր սրտի մեջ առաքինություններ էր մշակում, գազաններից հոշոտում և մահ: Եվ Աստված նրան պատասխանում է. «Մի՛ դատիր՝ ըստ քո աչքի տեսածի, որովհետև այդ հարուստի ընծաների վաստակը այն ծոխ թաղումն էր, և այդքանով երկրի վրա նա ստանում է իր նվերների ու ընծաների վերջին վաստակը: Նա կանգնելու է Աստծո դատաստանի առջև ու պատասխան է տալու իր հոգու փրկության համար անտարբեր, անփույթ, ծույլ ու շաղված լինելու համար: Իսկ այդ ճգնավորը, որ ամեն օր Աստծո հաճությամբ էր ապրում, ուներ փոքրիկ ու աննշան չխոստովանված մեղքեր, ու այս ողբերգական ու եղերական մահով Ես մաքրեցի նրան, և ահա նա այժմ Իմ առջև՝ հավիտենության մեջ է»:

Է. Ինչո՞ւ է Աստված թույլ տալիս նեղությունները

Հիմա, եթե մեզանում ապաշխարության կյանքով ապրելու ուժ է դեռ մնացել, և ընդունակ ենք զղջման ու աղոթքի, ապա շուտով այս վերջիններն ի զորու են համակենտրոնացնելու մեր հոգևոր զորությունները և թույլ չտալու, որ երբևէ մեր անզգաղ հոգևոր ուշադրությունը լքի մեր սրտի տարածքը, այլ միտքն զգոնապես հսկի հոգու դռները, իսկ անդադար աղոթքը անմար կանթեղի նման միշտ վառ մնա մեր ներսում և ջերմացնի այն:

Եվ հետո՝ երբեք չդատենք ուրիշներին, քանի որ սեփական ապաշխարության, քաղցր լուծով տառապանքի մեջ հեշտացած ճանապարհը մեզ սովորեցնում է դեպի ներս նայել և ի ներքո լինել: Եթե մեր մեղքով Քրիստոսից բաժանման՝ ոչ ըստ մարմնի, այլ՝ ըստ հոգու, սրտի տրտմության ու տառապանքի փորձն ունենք, երբեք չենք դատի ուրիշներին, որոնք տառապում են իրենց անզեղջ մեղքի պատճառով: Եվ եթե մարդն իրապես ապաշխարության կյանքով է ապրում, ապա երբեք չի բողոքի՝ ասելով, թե բավական է մեզ ապաշխարության կոչերով ահաբեկեք: Եթե մենք զղջման ու ապաշխարության լրջմիտ կյանք ենք ապրում, անպայման հարազատ ու զգալի է դառնում մեզ համար Քրիստոսի կենդանի ներկայության հոգենորոգ ու զվարթարար ապրումը:

Այսպիսով՝ Աստված է թույլ տալիս նեղությունները, պատուհասներն ու աղետները, դժբախտ պատահարներն ու հալածանքները, որ մաքրի մեզ որոշ մեղքերից, մեր հոգևոր տեսողությունից վրիպող փոքր ու մեծ անկումներից: Աստված ում սիրում է, խրատում է:

Ը. Հպարտության համաճարակ

Եվ դարձյալ հիշենք մեր ականջին անհաճո փաստը, որ մեր ժողովուրդն այժմ գտնվում է ոչ թե փոքր մեղքի պատասխանատվությամբ տառապանքների, այլ սարսափելի հպարտության ջղագարության ու համավարակի մեջ: Մեր ներքին հոգևոր տեսողությունն այնքան է խամրած այդ խելացնոր ինքնահաճությունից, ինքնահաստատման ու հեշտության ախտերից, որ անկարող ենք լինում տեսնել, գիտակցել մեր մեղքերը, իսկ հպարտության համաճարակով պատժված մարդը հիմարանում է:

Աստված թույլ է տալիս, որ նեղություններով անցնենք մեր ազգի Կարմիր ծովը և զրկանքի, տառապանքի, հալածանքի անապատի մեջ մկրտվենք արյամբ ու ցավով: Քանի որ մեղքով գռեհկացած ու մարմնահակ մարդու և ազգի համար այս ամենը հնարավորություն է՝ վերագտնելու կորսված ճշամարիտ աստվածապաշտությունն ու հոգևոր կյանքը: Բայց մենք կարող ենք ավելի մեծ շնորհի գտնել Աստծու առջև, երբ գիտակցաբար քայլենք ու Աստծու կողմից մեզ համար պատրաստված այդ դառը բաժակը հավատքով ընդունենք՝ «Տէր, թող Քո կամքը լինի», որտեղ երբեմն մենք ցանկանում ենք ասել՝ Տէր, հեռացրու մեզանից այդ բաժակը, որովհետև մեր ուժերից վեր է դարձել, բայց ոչ այն պատճառով, որ մենք ենք ուզում, այլ ինչպես Քո կամքն է, թող այդպես լինի...

Մենք աղոթում ենք նաև, որ Տերը ոչ միայն համբերությամբ զինի մեզ, այլև դադարեն հոգևոր համաճարակի այս պատուհասները: Աղոթում ենք, որ մեր փոքր, կարողության չափ ապաշխարությամբ և արցունքներով մեղմացնենք մեր ազգին ու հայրենիքին վրա հասած Աստծո ցասումը, և Տերը, հանուն սակավ հավատարիմների, կարող է քաղաքներ, ազգեր ու երկրներ խնայել:

Չի կարելի տեսանելի վախճանը համարել հավիտենության մեջ հոգու գոյության երաշխիք: Այսինքն՝ քիչ առաջ մեծահարուստի ու ճգնավորի պատմությունը սովորեցնում է մեզ, որ այլ է Աստծո գործերի՝ մեզ համար կարծես ակնհայտ ու տեսանելի այս տրամաբանությունը: Որովհետև հարութենական գիտակցություն ունեցող քրիստոնյան Աստծո և ավետարանական տրամաբանությամբ է տեսնում ու գնահատում իրողությունները: Եթե մարդը մահանում է ինչ-որ պատահարի պատճառով, չի կարելի ենթադրել, որ նա փրկություն չունի: Ավետարանի ուղղափառ ընկալումը ձեռք է բերվում այն ժամանակ, երբ քրիստոնյան, դարձյալ նույն ապաշխարության խոնարհ ու պարզ կյանքով ապրելով, սրտի մաքրություն է ձեռք բերում: Իսկ սրտի մաքրությունն ինքնին պայման է, որ Աստծո ծածուկ խորհուրդներն ու գաղտնիքները հայտնվեն...

Թ. Ապաշխարության պտուղները

Բանաձևը պարզ է և հստակ՝ *ապաշխարություն + սրտի մաքրություն = արքայություն կամ աստվածատեսություն:*

Ավետարանի ընթերցվածքում անպտուղ թզենու առակը նույնպես վերաբերում է մեզ: Յուրաքանչյուրս, ըստ մեր ապաշխարության որակի, կարող ենք լինել պտղատու կամ անպտուղ թզենի: Պտղատու, երբ զղջումի և ապաշխարության լվացման ու մաքրագործման ճանապարհով ենք ընթանում, իսկ անպտուղ, երբ հպարտությամբ կուրանում են մեր սրտի իմանալի աչքերը: Անգամ հստակ ու պարզ կոչերն այս պարագայում հեռավոր են և երբեք մեզ չեն վերաբերում:

Թող Աստված բոլորիս դարձնի պտղատու թզենիներ՝ տնկված Աստծո տան մեջ, որպեսզի ծաղկենք ապաշխարության պտուղներով՝ խոնարհություն, շնորհք, խաղաղություն, սեր և այն բոլոր առաքինությունները, որոնք Աստված փափագում է մեր կատարելության հասակի մեջ հասունացած տեսնել: Այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. Ամեն:

Շնորհք աբդ. ՊԱԼՈՅԱՆ

Ճաշակական խորհուրդը Հին և Նոր ուխտերում

↩ էջ 5

Մեղավոր մարդկությունը փրկության միայն մեկ ճանապարհ ուներ՝ Աստծո առաջնորդությունը: Հակառակը բոլոր դեպքերում կույրերի առաջնորդությունն է դեպի խորխորատ: Հին ուխտը՝ Ճատիկը, բավարար չէր փրկության համար: Դա էր պատճառը, որ Հիսուս եկավ և հաստատեց Նոր ուխտը, որ պետք է դառնար միակ, ճշմարիտ փրկությունը համայն մարդկության: Մատթեոս ավետարանիչը նշում է. «Բաղարջակերաց տոնի առաջին օրը աշակերտները մոտեցան Հիսուսին և ասացին. «Որտե՞ղ ես ուզում, որ Քեզ համար պատրաստենք զատկական ընթրիքը»: Հիսուս ասաց նրանց. «Գնացե՛ք քաղաք՝ այսինչ մարդու մոտ, և նրան ասե՛ք. «Վարդապետն ասում է. Իմ ժամանակը մոտեցել է, Իմ աշակերտների հետ քեզ մոտ եմ նշելու Զատիկը»»: Աշակերտներն արեցին այնպես, ինչպես Հիսուսն էր կարգադրել իրենց, և պատրաստեցին զատկական ընթրիքը» (Մատթ. 26:17–19): Աշակերտների պատրաստած զատկական այդ Վերջին ընթրիքի ժամանակ էր, որ Հիսուս ազդարարեց Արարչի Նոր ուխտը՝ կամավոր հանձնառությունը՝ սեփական Մարմինն ու Արյունը զոհաբերելու մարդկության մեղքերի քավության համար: Ահա այսպես հին Զատիկը փոխարինվեց նոր՝ փրկչական Զատկով:

Սուրբ Պողոս առաքյալն իր՝ կորնթացիներին ուղղած առաջին նամակում գրում է. «Մաքրե՛ք, դե՛ն նետեք հին խմորը, որպեսզի նոր ու անթթխմոր զանգված լինե՛ք, ինչպիսին եք արդեն, քանի որ Քրիստոսը՝ մեր Զատկի Գառը, մորթվեց» (Ա Կորնթ. 5:7), ինչպես նաև հռոմեացիներին գրած նամակում ասում է. «Աստված Նրան առաջադրեց որպես քավության միջոց Իր արյամբ, հավատի ճանապարհով, ապացույց Իր արդարության անցյալում՝ Աստծու համբերության ժամանակ գործված մեղքերի թողության համար» (Հռոմ. 3:25): Հայ աստվածաբանական մտքի մեջ էլ Սուրբ Ներսես Շնորհալի Հայրապետն իր «Վասն վեցերորդի աւուր արարչութեանն եւ վասն վեցերորդի դարուն եւ ի խաչելութիւնն Քրիստոսի» երգում հիանալիորեն նկարագրում է Քրիստոսի կամավոր զոհաբերությունը՝ որպես նոր Զատկի հաստատում. «Յօր հաճութեամբ ի մահ խաչին Եկն կամաւ ի յուրբաթին, Գառն զենաւ ի հին Զատկին՝ Փոխան գառանցն օրինակին»: Զոհաբերվեց Գառը հին Զատկի օրը՝ նախօրինակ գառների փոխարեն:

Այսպիսով՝ Քրիստոսի Հարությունը, որ բովանդակ մարդկության փրկության աստվածային ավետիսն է, նաև նոր Զատիկն է, որ հաստատվել է Տիրոջ կողմից հին Զատկի փոխարեն, որպեսզի մարդկությունն այլևս տոնական այս հրաշքում տեսնի ներկա՛ իրողություն, շարունակակա՛ն փրկագործություն: Զատիկն այլևս սոսկ անցյալում կատարված փրկության հիշատակում չէ, այլև հավիտենական ազատագրություն, իսկ մենք ոչ թե այս տոնի հիշատակողներն ենք, այլ դրանով ապրողներն ու շնորհազարդվածները:

Արման սրկ. ԲՈՒՆԱՐՋՅԱՆ
Արմինե ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ
Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ
Հիմնադիր՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հրատարակիչ՝ «Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն
Գլխավոր խմբագիր՝ Նարինե Հովհաննիսյան
Գրանցման վկայական՝ 624
Խմբագրության հասցեն՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հեռախոս՝ (010) 517 280
Էլ. փոստ՝ qristonyahayastan1@gmail.com
qristhay@etchmiadzin.am
web կայք՝
krishayas.wordpress.com
etchmiadzinlibrary.am/en/kristonya-hayastan
Ստոր. տպագր. 15.04.2026 թ.
Տպաքանակը՝ 1015